

www.ter-hambardzum.do.am

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿԻՐ

Կազմող՝ ԾՈՎԻՆԱՐ ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ

ԱՍՏՕՆ ԵԶԱԿԻ ԴԻՍԱՊՈՍԿԵՐԸ

Առասպել է, թե իրականություն, դժվար է ասել: Համենայն դեպս, այսօր էլ Իտալիայի Միլան քաղաքում պահպանվում է մի դիմանկար, որը մոտ 2000 տարեկան է և հեռավոր միջնադարում բերվել է Եդեսիայից: Պաստառի վրա Հիսուս Քրիստոսի ամենահին դիմապատկերն է, որը դարերի ընթացքում չի կորցրել թարմությունը և արտասովոր ազդեցություն է թողնում դիտողի վրա: 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացին վկայում է, որ այդ պատկերը առաջին դարում հայոց թագավորի հրամանով արարել է Անան անունով հայ նկարիչը: Ոչ թե մտացածին կերպար է, այլ նկարչի բնօրինակ է եղել հենց ինքը՝ Աստծո որդին: Ըստ Խորենացու՝ Անանը թագավորին է ներկայացրել «Հիսուս Քրիստոսի» կենդանագիր պատկերը: Մեկ այլ վկայություն հաստատում է, որ ողջ-ամողջ և մարդկանց մեջ շրջագայող ու իր վարդապետությունը քարոզող Քրիստոսին նկարելիս Անանի ձեռքերը դողացել են՝ դիմացը կանգնած կենդանի Աստծո դեմքի արտասովոր ճառագայթումից:

Նկարիչը, ասում են, երկար և անօգուտ չարչարվել է բնօրինակը հարազատորեն վերարտադրելու փորձ անելիս, և Աստծո որդին, այդ տեսնելով, իբր, պաստառը հպել է իր դեմքին, որ բնական չափերով նույնությամբ պատկերվի: Այսպես թե այնպես՝ պատմիչը հաստատում է, որ Անանի բերած կտավի վրա ճիշտ և ճիշտ Հիսուս Քրիստոսն է՝ հենց այնպիսին, ինչպիսին եղել է մինչև խաչվելն ու հարություն առնելը:

Ասում են նաև, որ նկարը երկար ժամանակ պահպանվել է Եդեսիայի քրիստոնեական եկեղեցում և հրաշքներ է գործել:

Երբ պարսիկները պաշարել են Եդեսիան և սպառնացել են կոտորել քաղաքի բնակչությանը, պաշարվածները պարսպից կախել են նկարը, և նրա անօրինակ ճառագայթումից թշնամին դադարեցրել է շրջապատումը և փախել խուճապահար:

Հետագայում Անանի հրաշակերտը բյուզանդական կայսրերն ավարառել են: Այդպես այն հայտնվել է Իտալիայում և մինչ օրս շլացնում է տեսողներին՝ իբրև հետագա շատ նկարիչների ստեղծած Քրիստոսների բազմաթիվ դիմանկարների մեջ միակ ճշմարիտն ու հավաստին:

Այդ ժամանակ Քրիստոսը 33 տարեկան էր, և Անանի նկարում նրա դեմքը մագաղաթի նման անկնճիռ մաքուր է, լայն ճակատը, խորունկ աչքերը, երկկողմանի իջած երկար մազերն ու սև մորուքը խորհրդանշում են մտքի ուժը, խորաթափանցությունն ու պայծառատեսությունը: Ե՛վ իրական մարդ է, և՛, միաժամանակ, հոգիների վրայով հավերժորեն նավարկող տիեզերական ճամփորդ:

«ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈՅ»

Միջնադարյան բանաստեղծության անդաստանում մի հրաշալի ծոներգ կա, ուր փառաբանված են Աստծո Որդու շնորհները, հիվանդության ժամանակ և առողջ վիճակում մարդկանց հասնելու ու փրկության ձեռք մեկնելու աստվածային ուժն ու կարողությունը: Հեղինակը Ներսես Շնորհալին է՝ Կիլիկյան Հայաստանի՝ վաղուց արդեն սրբերի շարքը դասված մեծահամբավ կաթողիկոսը, որը հայոց Պահլավունիների հռչակավոր տոհմից էր և սուրբ Գրիգոր Լուսավորչի հեռավոր ժառանգներից: Նրա գրչին են պատկանում եկեղեցական բազմաթիվ մեկնություններ, բանաստեղծություններ, հանելուկներ... և, իհարկե, «Ողբ Եդեսիո» նշանավոր պոեմը: Բայց տասներկուերորդ դարում ինչպիսի ստեղծագործություն էլ գրած լինի Ներսես Շնորհալին, «Առավոտ լուսոյ» տողով սկսվող ծոներգը շահեկանորեն առանձնանում է հայ բանաստեղծության մեջ առատորեն սփռված փառաբանությունների շարքից: Այն վաղուց արժանացել է մեծագույն ուշադրության և սերունդների շուրթերին հնչում է՝ իբրև ամենօրյա աղոթք: Դա վաղ առավոտյան հավատացյալ մարդկանց հոգիները թափանցող «արդար արեգակի» լույսի արարման հրճվանքն է, այդ լույսով սնվելու ու ջերմանալու բնական ցանկության արտահայտությունը: Բանաստեղծության մեջ պահապան լույսը հանդես է գալիս Հիսուս Քրիստոսի պատկերով: Եվ խնդիրը միայն այն չի, որ «Առավոտ լուսոյ» աղոթքն արարված է վարպետորեն ու այնքան կատարյալ, որ թվում է՝ անձեռակերտ է, այլև այն, որ պատկերների, փոխաբերական իմաստների ամբողջ համակարգը կենդանի ու շարժուն հոսում է սրտեսիրտ, մարդկանց վարակում բնական ու աստվածային գեղեցկությունների ներգործուն հավատով:

Շշնջում ես այդ աղոթքը, և թվում է, թե Աստված յոթ սարուծորով բաժանված չի քեզանից, այլ հենց քո կողքին է, և գլխիդ վրան զգում ես Նրա ամենագոր աջի հպումը, լսում Նրա քաղցրանվագ ու բազումողորմ խոսքը... Բանաստեղծությունը գրված է եռատողով, յուրաքանչյուր եռատող սկսվում է միևնույն տառով՝ մեսրոպյան այբուբենի համապատասխան ծավալունով՝ Ա-ից մինչև Ք: Ահա Շնորհալու աղոթքի առաջին եռատողը՝ գրված ոսկեղենիկ գրաբարով.

Առավոտ լուսոյ,

Արեգակն արդար

Առ իս լոյս ծագեա:

Այնուհետև հաջորդում է «Բ» տառով սկսվող եռատողը և այդպես՝ շարունակաբար: Եվ հայոց այբուբենի առաջին «Ա» տառը մեկ ուրիշ խորհրդանիշ էլ ունի. այն Աստված բառի հոմանիշն է, իսկ բանաստեղծության վերջին եռատողը, որ սկսվում է «Ք» տառով, ոչ այլ ինչ է, եթե ոչ «Քրիստոս» անվան ոգեղենիկ պատկերը: Խոսքը, իհարկե, վերաբերում է

մեսրոպյան այբուբենին, իսկ «և, օ, ֆ» տառերը հավելվել են ուշ միջնադարում: Ուրեմն՝ շնչալով այս աղոթքը՝ մենք ակամա արտաբերում ենք նաև «Աստված Քրիստոս» միաձույլ կապակցությունը, որը դարձյալ մեր հավատի աներևույթ վկայությունն է:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ՍՈՒՆԵՏԻԿՆԵՐԸ

Մեր թվարկության առաջին դարում հայոց Աբգար թագավորը, որի արքունիքը հինավուրց Եդեսիա քաղաքում էր, դեպի Պարսկաստան կատարած արշավանքի ժամանակ ծանր հիվանդանում է: Ո՛չ բժիշկ ու հեքիմ, ո՛չ դեղ ու դարման: Ինչ անում-չեն անում, ոչ ոք և ոչինչ չեն օգնում: Հիվանդությունն անբուժելի է ու սաստկացող: Եվ ահա թագավորին ասում են, թե Երուսաղեմում հայտնվել է մի հրաշագործ Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսը, ով ձեռքի հպումով, խոսքի ու հայացքի շարժմամբ բուժում է անդամալուծներին, բորոտներին, կույրերին, խուլուհամրերին, նույնիսկ կենդանացրել է մահացածին: Ինչպես վկայում է պատմահայր Մովսես Խորենացին, որը հնագույն մատյաններից քաղել է այս պատմությունը, Աբգարը, պատգամավորներ ուղարկելով Փրկչի մոտ, նամակով խնդրում է գալ Հայաստան և բուժել իրեն: «Դու ինձ գրեցիր, որ գամ քեզ մոտ: Ես այստեղ պետք է կատարեմ այն բոլորը, որի համար ուղարկված եմ: Երբ այս բոլորը կկատարեմ, կհամբառնամ Նրա մոտ, ով ինձ ուղարկեց, և երբ համբառնամ, քեզ մոտ կուղարկեմ իմ այս աշակերտներից մեկին, որ քո ցավերը բժշկի և կյանք շնորհի քեզ և քեզ հետ եղողներին»- պատասխան նամակում գրում է Քրիստոսը:

Ամեն ինչ կատարվում է ըստ կանխասացության: Փրկչի համբառնալուց հետո Հայաստան է ուղարկվում Թադևոս Առաքյալը: Մինչև այժմ շատերը կարծում են, թե այս Թադևոսը մեկն է Հիսուս Քրիստոսի 12 առաքյալներից: Տասներկուսի մեջ իսկապես եղել է Թադևոս անունով Առաքյալ, բայց սա, ամենայն հավանականությամբ, նույն անունը կրող մեկ ուրիշն է, որովհետև Խորենացին այդ մասին պարզորոշ գրում է. «Տասներկու Առաքյալներից մեկը՝ Թովմաս Առաքյալը, Եդեսիա քաղաքն ուղարկեց Թադևոսին՝ յոթանասուն աշակերտներից, որպեսզի Աբգարին բժշկի և Ավետարանը քարոզի Տիրոջ ասածի համաձայն»: Սա հաստատվում է նաև այն փաստարկով, որ 12-ի մեջ կան երկու Սիմոն՝ Սիմոն- Պետրոս և Սիմոն Կանանացի, և երկու Հակոբոս՝ Հակոբոս Ջեբեդայան և Հակոբոս Ալփյան, ուրեմն՝ ինչո՞ւ չի կարելի հավաստել, որ 70-ի մեջ եղել է ևս մեկ ուրիշը՝ Թադևոս անունով:

Թադևոսն, ուրեմն, ոչ թե 12 Առաքյալներից, այլ Հիսուսի 70 աշակերտներից մեկն էր: Բայց ով էլ լիներ, Առաքյալը մնում է Առաքյալ, և Փրկիչն օժտել էր նրան հրաշագործ զորությամբ և քրիստոնեական ուսմունքը քարոզելու մեծագույն ունակությամբ: Թագավորին և Եդեսիա քաղաքում եղած բոլոր հիվանդներին բուժելուց հետո՝ Թադևոսը հիմնադրում է քրիստոնեական առաջին եկեղեցին: Ադդե անունով մեկին, որը մետաքսագործ և խույր կարող էր, ձեռնադրում է հայոց առաջին եկեղեցու առաջին եպիսկոպոս: Այնուհետև մկրտությամբ և Քրիստոսի հավատով հեթանոս մարդկանց դարձի բերելու դժվար առաքելությունը Թադևոսն իրագործում է բովանդակ

Հայաստանում շատ վայրերում հիմնելով եկեղեցիներ և եպիսկոպոսներ օժելով: Այնուհետև Առաքյալը Աբգարից հրովարտակ ստանալով, որ ամենքը լսեն Քրիստոսի Ավետարանը, Խորենացու վկայությամբ, «գալիս է Աբգարի քեռորդի Սանատրուկի մոտ, որին Աբգարը նշանակել էր առաջնորդ հայոց աշխարհի և գորքի վրա»: Սա այն Սանատրուկն է, որ տարիներ անց՝ Աբգարի մահից հետո, թագավորեց Հայաստանում, վերականգնեց քրիստոնեական համայնքների ներգործությամբ խարխլվել սկսող հեթանոսական հավատը: Նրա հրամանով նահատակվեց նաև Թադևոս Առաքյալը, որի պատճառով էլ այդ թագավորը կրեց «Առաքյալասպան» մականունը: Սակայն նոր վարդապետության առողջ սերմերը, որ մարդկանց հոգիներում ցանել էր այդ սուրբ նահատակը, իսպառ չկորան, նորանոր ծիլեր տվեցին և թաքուն շարունակվեցին շատ երկար՝ ամբողջ երկու դար, մինչև Տրդատ թագավորի օրոք քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն: Թադևոս Առաքյալը, հետագայում նաև՝ Բարդուղիմեոսը, հայոց աշխարհում տարածված քրիստոնեական առաջին եկեղեցիների հիմնադիրներն են: Նրանց գործունեության ամուր և անխորտակ պատվանդանին հենված՝ մեր եկեղեցին կոչվում է Առաքելական:

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ 12 ԱՌԱՔՅԱԼՆԵՐՆ ԵՆ՝

1. Պետրոս-Սիմոն
2. Անդրեաս
3. Հակոբոս Ձեբեդյան
4. Հովհաննես
5. Փիլիպպոս
6. Բարդուղիմեոս
7. Մաթևոս
8. Թովմաս
9. Հակոբոս Ալփյան
10. Թադևոս
11. Սիմոն Կանանացի
12. Հուդա1

1. Հետագայում՝ Մատաթիա, որ Քրիստոսին մատնող Հուդա Իսկարիովտացու փոխարեն Առաքյալ ընտրվեց, և, իհարկե, Սավուղ կամ Սողոս, որը հետո Պողոս Առաքյալ դարձավ:

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԻ ԴԱՐԲԻՆՆԵՐԸ

Յովհաննես Յովհաննիսյանը մի հրաշալի բանաստեղծություն ունի, որ շատերը բերանացի գիտեն, մանավանդ չարի ու չարության դեմ մարդուն զգոնության, զգաստության կոչող տողերը.

Ձարկեցե՛ք, դարբիններ՛, կռանը սալին,

Որ չար արքայի շղթայքն ամրանան:

Հաճախ է պատահում, որ երեխաները շուտասելուկի պես արտասանում են այս տողերը, չմտածելով, որ դրանք գալիս են հնագույն վիպասքից, ուր պատմական ու առասպելականը, իրականությունն ու ժողովրդի երևակայությունը ներդաշնակորեն շաղախված են իրար: Այդ առասպելը տեղ է գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և հնագույն էպոսի կարևոր բեկորներից մեկն է: Ըստ դրա՝ առաքինի և քաջ Արտաշես արքային փոխարինելու է գալիս նրա որդին՝ Արտավազդը, որ բնույթով չար էր: Գողթան գավառի վիպասանները իրենց երգերում նրան տվել են դիվական նախասկիզբ: «Բայց ոմանք ասում են, թե Արտավազդի ծնվելու ժամանակ մի պատահար է հանդիպել, և կարծում են, թե Աժդահակի սերնդից կանայք նրան կախարդել են, որի պատճառով Արտաշեսը այդ կանանց շատ չարչարեց,- գրում է Խորենացին,- նույն երգիչները առասպելի մեջ այսպես են ասում.

Վիշապագունքը մանուկ Արտավազդին գողացան

Եվ նրա տեղը դրին դև»:

Ահա այդ դիվական ծագումն է պատճառը, որ նա, թագավորելով հայոց աշխարհում, բազմաթիվ չարագործություններ է կատարում և, ի վերջո, նրան բռնում է հոր՝ Արտաշես արքայի անեծքը.

Թե դու հեծնես, որսի գնաս,

Ազատն ի վեր, ի վեր Մասիս,

Քաջքերը քեզ բռնեն-տանեն

Ազատն ի վեր, ի վեր Մասիս,

Այնտեղ մնաս, լույս չտեսնես:

Մահվան պահին այսպիսի անեծք է մրմնջում Արտաշես հայրը: Նրա խոսքը դառնում է մարգարեություն: Արարատ սարի մութ ու անանցանելի վիհերից մեկում Արտավազդը փակվում է շղթայակապ: Ըստ ժողովրդական մտածողության, այսպիսին է չարի ու չարագործության ապագան: Նա այլևս չի տեսնելու բնական լույսը և մնալու է շղթայակապ, որքան էլ փորձեն ազատել կապանքներից: «Երկու շուն,- գրում է Խորենացին,- կրծում են նրա շղթաները, և նա ջանք է թափում դուրս գալ և վերջ տալ

աշխարհին, բայց, ասում են, դարբինների կռանահարության ծայնից կապանքներն ամրանում են»:

Չարը չի ոչնչանում ամբողջովին, բայց և միաժամանակ, ըստ առասպելի, անսահման նեղացել է նրա գործունեության շրջանակը. այն կաղապարվել է Արարատ սարի մթին ու անելանելի վիհով՝ անխորտակ շղթաների թույլատրած սահմաններում: Չարի ու բարու կռիվը հավերժական է, որովհետև մշտապես կան հմուտ դարբինները, ովքեր անվերջ նորոգում են նախահարձակ չարի կապանքները: Այդ դարբինները բնակվում են Արարատ սարի խոր վիհերում: Մշտնջենական կռիվը ժամանակ ու տարածություն չի ճանաչում, որովհետև, ըստ առասպելի՝ «Մինչև այժմ էլ դարբիններից շատերը կիրակի օրերին երեք կամ չորս անգամ կռանով խփում են սալին, որպեսզի Արտավազդի շղթաներն ամրանան»:

ԱՍԾՈՒ ՕՐՅՆՈՒԹՅՈՒՆԸ

1211 թվականի այդ օրը ցնծություն էր բովանդակ Կայան գավառում (այժմյան Դիլիջանի և Իջևանի շրջանը): Դրվում էին Նոր Գետիկ վանքի հիմնաքարերը: Տեղացիները դրա կառուցմանը սպասել էին ավելի քան հիսուն տարի. չէ՞ որ 1139-ի ավերիչ երկրաշարժից հիմնովին փլվել էր հին եկեղեցին, և սպասավորները տեղից տեղ էին թափառում և անարդյունք դիմումներ հղում այս կամ այն իշխանին ու մեծահարուստին: Հարկավոր էր Մխիթար Գոշ վարդապետի նման մեկը, որ գիտնականի մեծագույն համբավով և հզոր կապերով կարողանար թույլտվություն և դրամ ձեռք բերել՝ նոր եկեղեցի կառուցելու համար: Հինգ տարի տևեց շինարարությունը: Այս մասին վավերական գեղեցիկ տողեր է թողել 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին. «Ավարտվեց Գետիկի հռչակավոր ու ծիծաղատեսք եկեղեցին, որ կառուցեց Մխիթար վարդապետը», - գրել է նա: Եկեղեցու հարդարման գործում շատ բաներով օգտակար եղան կանայք՝ հատկապես իշխանուհի Արզուխաթունը, ով «իր դուստրերի հետ պատրաստեց նաև գեղեցիկ վարագույր՝ սուրբ խորանի ծածկույթ, որ հիացնում էր տեսնողներին. պատրաստված էր այծերի շատ փափուկ աղվամազից, ներկված էր պեսպես ու գույնզգույն, գործված էր քանդակաձև ու ներկված էր պատկերներով՝ Հիսուս Քրիստոսի մարդեղության և շատ սրբերի ճշգրտագույն նկարների ընդօրինակությամբ: Ովքեր տեսնում էին, Աստծուն օրհնություն էին տալիս, որ կանանց ուստայնանկության (հյուսելու) իմաստություն և նկարակերտության հանճար տվեց»:

Այսպես՝ եկեղեցու շինարարությանն ու հարդարանքին մասնակցեց Կայան գավառի և շրջակայքի ամբողջ ժողովուրդը: Վանական այդ գեղեցիկ համալիրը կոչվեց իր մեծ կառուցողի՝ հայոց միջնադարի հռչակավոր գիտնական Մխիթար Գոշի անունով: Հետաքրքիր է, որ գիտնականը, ինչպես վկայում է նրա աշակերտ Կիրակոս Գանձակեցին, «Սիրում էր անապատ ու ամայություն: Նա իր համար տուն պատրաստեց վանքից հեռու: Եվ ծերության ժամանակ վանքի վերևում՝ աջ կողմից, շինեց մի փոքրիկ եկեղեցի, իբրև շիրիմ իր գերեզմանին՝ սրբատաշ քարով ու կրով ազուցված»: Մխիթար Գոշը մահացել է 1213-ին և թաղվել այդ գերեզմանում:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԸ... ՀՐԵՇՏԱ՞Կ

12-րդ դարավերջի փիլիսոփա, օրենսդիր և մանկավարժ Մխիթար Վարդապետը «Գոշ» մականունը ստացել է ժողովրդական պատկերացումների համաձայն: Այնքան մեծ և ազդեցիկ է եղել նրա հմայքը ժամանակակիցների վրա, որ նույնիսկ Ջաքարե Ջաքարյան երկայնաբազուկը նրան դարձրել է իր խորհրդականը, և Մխիթարի խորհրդով է առաջնորդվել և՛ թուրք-սելջուկներից ազատագրված Հայաստանը կառավարելիս, և՛ հաղթական ճակատամարտերի գնալիս:

«Գոշ» բառը նշանակում է երեսին մազ չունեցող ու երբևէ ածելիի սայր չտեսած տղամարդ: Հնարավոր է, որ իրականում Մխիթար Գոշը և՛ բեղ, և՛ մորուք է ունեցել, սակայն, ժողովրդական հավատքի բովով անցնելիս, նա դասվել է սրբերի, հրեշտակների շարքը: Իսկ հրեշտակը հենց անբեղ ու անմորուս է լինելու՝ նախ՝ տարբերվելու սովորական մահկանացուներից և Աստծո մոտ իր հաճախակի ելունուտը շեշտելու և ապա՝ երկար ժամանակ չհեռանալու մարդկանց հիշողությունից: Այսպես թե այնպես՝ «Գոշ» մականունը միակցվել է Մխիթարի անվանը, իբրև անբաժանելի կենսագրություն:

Բացի միջնադարյան Հայաստանի առաջին օրենսգրքից՝ «Դատաստանագրքից», Մխիթար Գոշը գրել է նաև բարոյախրատական առակներ, որոնցից շատերը նրա սահմանած օրենքների կերպարանավորված բացատրությունն են:

ՀԱՎԱՏԻ ԿԱԼԱՆԱԿՈՐԸ

Արարատյան դաշտում, այժմյան Արտաշատ քաղաքից ոչ հեռու, մի յուրօրինակ թանգարան կա բաց երկնքի տակ: Խոր Վիրապն է, որը, մինչև քրիստոնեությունն իբրև պետական կրոն ընդունելը, նախապես փորվել է Արտաշես արքայի հրամանով՝ Արտաշատ մայրաքաղաքի միջնաբերդի նկուղն ի վար, նախկինում անդառնալի ու անելանելի բանտ է եղել մահապարտների համար՝ չափազանց խոր ու ուղղաձիգ փորվածքով: Ով այնտեղ էր իջեցվում, այլևս վերադարձի նշխարահատիկ հույս անգամ չէր փայփայում: Խոր Վիրապի հատակը խոնավ էր, չորսբուրդը վխտում էին ամեն պահի խայթելու պատրաստ օձերը, օդը հեղձուցիչ էր, ամեն ինչ գերեզմանահոր էր հիշեցնում, և նրանում փակված մահապարտները մեկ-երկու օրում, պայմաններին չդիմանալով, կնքում էին մահկանացուն: Ավանդությունը, հինգերորդ դարի պատմիչ Ագաթանգեղոսի վկայությամբ, ասում է, որ բանտարկյալներից մեկը, միայն մեկն է Խոր Վիրապում ողջ-առողջ մնացել շուրջ տասներեք տարի և ազատվել է՝ քրիստոնեության լույսը տարածելու բովանդակ Հայաստանում: Եզակի կալանավորը սուրբ Գրիգոր Լուսավորիչն էր:

«Երբ թագավորը (Տրդատ Մեծը) այն էլ իմացավ, որ Գրիգորն իսկապես Անակ Պարթևի որդին է, ով սպանել էր նրա հորը՝ Խոսրովին, հրաման տվեց կապել ոտքերը, ձեռքերն ու պարանոցը, և տարան նրան Այրարատ գավառը, հանձնեցին Արտաշատ քաղաքի բերդի դռակը և իջեցրին ներքին վիրապը, որի խորությունից դուրս գալն անհնարին էր, որպեսզի իսկույն մեռներ,- գրել է Ագաթանգեղոսը:- Այն տասներեք տարիներում, որ Գրիգորը մնաց բանտի բերդում և Խոր Վիրապում, մի այրի կին, որ այդ բերդում էր, երազում հրաման ստացավ, որ օրական մի նկանակ հաց պատրաստելով՝ Խոր Վիրապից վայր գցեր: Այսպիսով՝ Աստծո հրամանով նա կերակրվեց այնտեղ մնացած տարիներին»:

Իրեն բաժնեգրված բազմաթիվ այլևայլ տանջանքների հետ՝ Գրիգոր Լուսավորիչը տարիներ շարունակ դիմացել է այս ծանրագույն փորձությանը ևս. նրան պահել-պահպանել է Հիսուս Քրիստոսի հանդեպ անշեղ ու ճշմարտացի հավատը, հավատ, որ ինչպես ասում են, սարեր կշարժի:

ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՍԽԱԼԸ»

Գրիգոր Նարեկացու «Ծննդյան մեղեդի» տաղը Մարիամ Աստվածածնի ներքին և արտաքին գեղեցկության փառաբանությունն է: Այն սկսվում է այսպիսի պատկերով:

Ծով աչքերը՝ ծովում ծիծաղախիտ,

Ծավալվել են ծոցում առավոտի՝

Երկու փայլակնաձև արեգակի նման:

Այս յուրօրինակ աղոթքում արտացոլված երկնային ծովը կարելի է նկարել մուգ-կապույտով, ուր արեգակի պես պայծառ ու խորունկ աչքեր են լողում՝ արարելով և՛ լույս, և՛ բարություն, և՛ առավոտ, և՛ օր: Աստվածամոր աչքեր են՝ իրենց անկրկնելի խորքով ու գեղեցկությամբ ներկել են առավոտը: Տիեզերական ծավալում կա պատկերի մեջ: Այս ամենը նկարելիս՝ հնարավոր է, որ մի ակնթաթ կանգ առնենք «Փայլակնաձև. բառի վրա: «Արեգակ» գոյականի մակդիրն է: Սովորական, բառի բառարանային ընկալման տրամաբանությունն իսկույն կհուշի, որ Նարեկացին, գույների շարժուն խաղն արարելիս, չմտածված ու չապրված հնչերանգ է ավելացրել անզգուշաբար, քանի որ «Փայլակնաձև» բառը նշանակում է «Կայծակի նման», «Կայծակի ձև» ունեցող, և դժվար է հավատալ այդպիսի տեսքով արեգակի գոյությանը: Սակայն այստեղ բառարանային չոր իմաստից զատ, օգնության է գալիս տեսիլքից բխող բանաստեղծական պատկերավորման տրամաբանությունը: Թեև «Փայլակնաձև» մակդիրը դրված է «Արեգակ» գոյականի վրա, չմոռանանք-հիշենք, որ համեմատությունը վերաբերում է առավոտի գրկում լող տվող աչքերին, որոնք Աստվածամորն են և սովորական մահկանացուների վրա ունեն մեծ ներգործություն: Այդպիսի աչքերի և հայացքի մասին ժողովրդական ասացվածքը հուշում է՝ այս մարդը շանթող աչքեր (հայացք) ունի: Ահա այդ մտածողությունից է ծագել նարեկացիական «Փայլակնաձև» մակդիրը, որն օգտագործվում է՝ շեշտելու հասարակ մարդկանց վրա Աստվածամոր հայացքի ներգործությունը: Եվ ուրեմն՝ բառը Նարեկացին գործածել է «Շանթող, ներագող» իմաստով:

Բացատրությունը, սակայն, թերի կլինի, եթե չխորանանք բառի մեկ ուրիշ, թաքնված իմաստի մեջ ևս: Հայտնի է, որ կայծակը, ծնունդ առնելով երկնքում, մյուս կողմով՝ հարվածի ուղղությամբ, հենված է երկրի վրա: Այդպիսին է նաև Մարիամ Աստվածածինը. սովորական մահկանացու լինելով՝ նա երկրաբնակ է, բայց Քրիստոսի մայր դառնալով՝ միաժամանակ երկնաբնակ: Մարիամի հենց այս երկվությունն է խորհրդանշում «Փայլակնաձև» բառը: Ահա թե որքա՛ն բազմաշերտ է բանաստեղծական պատկերի մեջ ճիշտ և տեղին օգտագործված՝ նարեկացիական գտածո մասունքը:

ՀՈԳԵՎՈՐ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԹԱՐԹԸ

12-րդ դարի փիլիսոփա, մանկավարժ, հոգևորական գործիչ Հովհաննես Իմաստասեր Սարկավազն այն եզակին էր, ով մեծ համբավ ուներ բովանդակ Հայաստանում և դասվել էր հայոց սրբերի շարքը: Ուխտատեղի էր դարձել նրա նստավայրը՝ Հաղպատի վանքը: Տարբեր վայրերից այնտեղ էին գալիս ուսումնաստենչ պատանիներ՝ հագեցնելու ուսման ծարավը, հաղորդակցվելու սրբի լուսավոր մտքերին ու քարոզներին:

Հովհաննես Սարկավազի հանճարի մասին իրական պատմությունները, շրթեշուրթ անցնելով, խառնվում էին ժողովրդական խոսքուզրույցին բնորոշ գունագեղությանը, չափազանցությանը և լեզենդ դարձած՝ գնում էին՝ իրենց ճառագայթներով ջերմացնելու Հայաստան աշխարհի նույնիսկ ամենացուրտ ու խավար անկյունները: Ինչպես վկայում է այդ ժամանակի մատենագիր Կիրակոս Գանձակեցին, ժողովրդի մեջ տարածված մի զրույց տեղեկացնում էր, որ «այդ մարդը չափազանց փութեռանդ էր ուսման նկատմամբ»: «Մի անգամ այնպես պատահեց, որ Հովհաննես Սարկավազը գնաց քարայրը, որտեղ գրքերն էին,- վկայակոչում է Գանձակեցին,- նրա հետ կային նաև այլ հոգևորականներ ու աշակերտներ: Երբ, ի վերջո, նրանք դուրս եկան քարայրից, փակեցին դուռը: Սարկավազը թաքնվեց ներսում: Մյուսները մտածեցին, թե սուրբն իրենցից առաջ է դուրս եկել: Երբ դրա վրա շատ օրեր անցան, դարձյալ գնացին քարայրը՝ ինչ-որ բան վերցնելու: Տեսան նրան ու զարմացած հարցրին, թե՝ «Այսքան ժամանակ ինչպե՞ս ապրեցիր առանց կերակրի ու խմելու»: Նա նրանց ցույց տվեց գրքերը, որ կարդացել էր, և ասաց. «Այս էր իմ ուտելիքն ու խմելիքը, որ կերա ու խմեցի այս օրերին»: Եվ ուրեմն՝ Հովհաննես Սարկավազը մաքրակենցաղ վարքով ու օրինակով յուրովի հաստատել է «Ոչ միայն հացիվ, այլև բանիվ» ժողովրդական հանրահայտ ասացվածքը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՐԵՒԱ Է...

Վահրիճ տղան, իհարկե, շատ ու շատ ուրիշ պատմություններ էլ գիտեր, որոնք իրականում կատարվել էին և դարձել նրա բոլոր ապրումների կարևոր ու անբաժանելի մասնիկը: Դրանք փոքրիկ զրույցներ էին՝ քաղված հայոց պատմության տարբեր ժամանակներից, և այնքան էին հարազատ Վահրիճին, որ նրան թվում էր՝ հենց որ իր մաշկը քորի, դրանք իսկույննեթ արևերես են ելնելու իր մաշկի տակից:

Եվ սա՝ այս պատմությունը, որ, հենց հիմա կիմանաք, հայրիկը Վահրիճին սովորեցրել էր՝ մի հատված կարդալով 13-րդ դարի մատենագիր Կիրակոս Գանձակեցու գրքից:

Եվ ուրեմն՝ աշխարհում կար-չկար, հայկական մի քաղաք կար՝ Գանձակ անունով: 13-րդ դարի սկզբին այդ քաղաքը գրավել էին թուրք-սելջուկները, և թուրք քաղաքապետ էր իշխում քրիստոնյա հայերի վրա: Բայց հայերը, իհարկե, բովանդակ Արցախում և Գանձակում ունեին իրենց հոգևոր տերը՝ Աղվանից աշխարհի կաթողիկոսը՝ մի ծեր ու իմաստուն մարդ: Պատահում է՝ ծեր կաթողիկոսն օրերից մի օր մեռնում է, և նրան փոխարինող չի լինում այդ նույն կաթողիկոսական տոհմից: Ասենք, չէ՛, լինում է, որովհետև, երբ Աղվանքի կողմերի վարդապետներն ու եպիսկոպոսները տեսնում են, որ իրենց կաթողիկոսությունը վերացավ և այդ տոհմից ո՛չ եպիսկոպոս կա, ո՛չ քահանա, բացի մի մանուկ սարկավագից, նրան առնում-տանում են Բջնի՝ Վրթանես եպիսկոպոսի մոտ և քահանա են ձեռնադրում: Ապա բերում են Գանձակ քաղաքի Օմար անունով իշխանի մոտ և նրան աղաչում, որ թույլ տա այդ մանուկին կաթողիկոս ձեռնադրել: Իշխանն ասում է. «Հասակով չափազանց մանուկ է, դուք, որ չափահաս եք, ինչո՞ւ կաթողիկոս չեք լինում»: Նրանք ասում են. «Որովհետև նա կաթողիկոսական տոհմից է, աթոռը նրան է պատկանում»: Եվ իշխանը հրաման է տալիս՝ նրան ձեռնադրելու: Երբ ձեռնադրվում է, Ամիրան նրան նստեցնում է մի ազնիվ նժույգի, վրան թանկագին կերպաս է գցում և առջևից ու հետևից փողհարներ է կարգում ու շրջեցնում Գանձակի փողոցներով, որպեսզի բոլոր հայերն իմանան, որ այդ մանուկն է իրենց հոգևոր հովիվը:

Տարբեր ժողովուրդների պատմության մեջ մանուկ թագավորներ շատ են եղել, բայց մանուկ կաթողիկոս, թերևս, ձեռնադրվել է միայն Հայաստանում, միայն մեկ անգամ, այն էլ՝ 13-րդ դարասկզբին՝ Գանձակ քաղաքում, որտեղ և ծնվել է այս պատմությունն արձանագրող մատենագիրը՝ Կիրակոս Գանձակեցին: Հետաքրքիր է, որ մանուկ կաթողիկոսը Աղվանքի հայրապետական աթոռը վարել է երկար տարիներ և իր գործունեությամբ մեծ օգուտ է բերել Արցախի հայ ժողովրդին: Նա նշանավոր Տեր Հովհաննես կաթողիկոսն էր...

ՀՐԱՇԱՍԱՆՈՒԿԸ

Հեռու- հեռավոր միջնադարում հնագույն մատյաններ արտագրող մի պատանի գրիչ էր ապրում: Պատմությունը չի պահպանել նրա անունը, ինքն էլ չի հիշատակել: Միայն հայտնի է, որ Անանուն պատանին գրչության գաղտնիքներին ծանոթացել է հին Հայաստանի Թոքատ քաղաքում, ուր ծաղկող-գրիչների բազմաթիվ արվեստանոցներ կային, որոնք գրչատուն էին կոչվում: Դրանցից մեկում Անանուն պատանին հմտացել է վայելչագրության մեջ (այդ առարկան դասավանդում էին հին Հայաստանի բոլոր դպրոցներում և, ցավոք, այժմ հանիրավի հանվել է ուսումնական ծրագրերից): Այն ժամանակ պարտադիր էր, որ գեղեցիկ ձեռագիր ունենային բոլորը, առավել ևս նրանք, ովքեր նվիրվելու էին գրչությանը:

Անանունը հասակակիցներից տարբերվում էր արտակարգ գեղեցիկ ձեռագրով:

Հեշտ չէր մագաղաթյա գրքի ստեղծումը: Անանունը պիտի ծանոթ լիներ մագաղաթը կոկեղու, չորացնելու, կաշվե կազմ ու մելան (թանաք) պատրաստելու նրբություններին, նաև ունենար ծաղկող-նկարչի աստվածային շնորհ: Այդ էր պատճառը, որ գրիչները սովորաբար կյանքի փորձ ունեցող տարեց մարդիկ էին:

Իսկ Անանունը իսկական հրաշամանուկ էր: Նա պատմությանը հայտնի գրիչներից միակն էր, ով գիրք է արտագրել... ընդամենը 12 տարեկանում:

Հիմա էլ, դարեր անց, այդ գրչագիրը, որը պահպանվում է Մատենադարանում, դիտողի հիացմունքն ու զարմանքն է շարժում:

«Սա գրեցի Թոքատ քաղաքում՝ 12 տարեկան հասակում», - կարդում ենք հիշատակարանում: Իհարկե, շատ բան չէր փոխվելու, եթե նա այս հակիրճ հիշատակության մեջ ավելացներ նաև իր անունը: Եթե այդպես է, ուրեմն՝ թող նա մեր տպավորության մեջ մնա իբրև Անանուն հրաշամանուկ, իբրև մեզ հայտնի առաջին ու վերջին պատանի գրիչը...

ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿԻՐ

Եվ Նոյան տապանը կանգ առավ Արարատ սարի գագաթին: Միակ ցամաքը, որ աշխարհակործան ջրհեղեղի ժամանակ, գլուխը դուրս հանած՝ երևում էր օվկիանոսով պատված երկրի երեսին: Նոյն զգուշությամբ բացեց տապանի պատուհանը և խորը շնչեց լեռնային օդը: Երակներում խնդնդաց արթնացող հույսը. ամեն ինչ կատարվել էր, ինչպես պատվիրել էր Աստված: Մի բուռ հող կար ոտնատակ, որը հենարան-խարիսխ էր: Մարդկությանը փրկող առաջին նախապայմանն առկա էր՝ գլխավերևում շնչելի օդ էր, ոտքերի տակ՝ հող: Նոյն իր կնոջ՝ Նոյեմզարի, երեք որդիների՝ Սեմի, Չաբեթի, Քամի և նրանց կանանց հետ էր... Մի բուռ մազապուրծ մարդկություն էր, որն օվկիանոսի հատակին էր թողել նախորդ քաղաքակրթությունը: Մի բան որոշ էր ու հաստատ. նախկինը չէր կրկնվելու այլևս: Փրկվածներն ապագա մարդկության սերմերն էին, բայց իսկապես փրկվե՞լ էին, թե ոչ: Ինչ-որ կղզյակ ընկած աղետյալներ էին: Գուցեև փրկվել էին, բայց դա չէր կարևորը, այլ իրենց արարելիք ապագա մարդկության փրկությունն էր ամենից կարևորը, իսկ դրա համար լրացուցիչ երաշխիքներ էին հարկավոր:

Եվ Նոյն իր ուղարկած աղավնու միջոցով վերջապես պարզեց, որ համատարած օվկիանոսի ջրերը ցամաքել են և կարելի է փրկության կղզյակից լանջն ի վար իջնել մայրցամաք: Ո՞ւր էին գնալու առաջին հերթին, որտե՞ղ էին հանգրվանելու, ո՞րն էր ապագա մարդկության առաջին օրրանը լինելու: Սուրբ Արարատն արդեն եղել էր առաջին հանգրվանը, հետո՝ լանջն ի վար իջնելու ժամանակն էր, ցածում տեղավորված ընդարձակ դաշտավայրն ամենամոտն էր ու հրապուրողը: Եվ ապա՝ այսօրվա մտածողությամբ ասած, Նոյը ո՛չ ինքնաթիռ ուներ, ո՛չ ավտոմեքենա, որ ամենամոտ դաշտավայրն արագորեն ճեղքեր-անցներ ու գնա՛ր, ուրի՛շ տեղ բնակվեր:

Աղետյալները լանջն ի վար ոտքով էին իջնելու և առաջին իսկ պատահած, բնակության համար պիտանի վայրում խփելու էին վրանները: Իսկ այդ վայրն այլ տեղ չէր. դա Արարատյան դաշտավայրն էր՝ ապագա մարդկության բնօրրանը, որին մենք այսօր իրավամբ Ավետյաց Երկիր ենք անվանում: Նոյի Չաբեթ որդին հետագայում ևս մնաց այդ բնակավայրում, աճեց ու բազմացավ, և մենք՝ հայերս, ըստ Մովսես Խորենացու, սերված ենք մեր Չաբեթ նախապապից:

Արարատյան դաշտում խփած վրաններում ծխաց օջախը, ծնվեցին Սեմի, Չաբեթի ու Քամի երեխաները, Նոյ Նահապետի ձեռքով տնկվեց խաղողի այգի, հասունացավ բերքը և օրհնվեց: Մինչև հիմա էլ հայոց եկեղեցին պահել է խաղողօրհներթի՝ Նոյ Նահապետից եկած արարողությունը:

Ուրախության առաջին աղաղակի հետ՝ բերքի տոնի օրը, կայացավ առաջին գինարբուքը: Եվ եթե այսպես, քայլ առ քայլ հետևենք Աստվածաշնչին, ապա ծիծաղելի

Կինչեն շատ աստվածաբանների, պատմաբանների, հնագետների պնդումները, ըստ որոնց Ավետյաց Երկիրը ոչ թե Հայաստանում է, այլ ուրիշ վայրում: Նման կարծիք որդեգրածները միահամուռ ընդունում են, որ Նոյան տապանը հանգրվանել է Արարատ լեռան գագաթին: Եթե դա այդպես է, ապա ո՞ւր էր գնալու աղետյալ Նոյը Արարատ սարից: Թևե՞ր ուներ, ի՞նչ է, որ թռչեր, վայրէջք կատարեր, ասենք, Միջագետքում, գնա՛ր, Քաղդեաց աշխարհը հասնե՛ր... Ո՛չ այս, ո՛չ այն: Աղետյալն առաջինը ոտք դրեց Արարատյան դաշտում, և վերջինս էլ ապագա մարդկության բնօրրանը դարձավ: Մինչև հիմա էլ հայ ժողովրդի հիշողության մեջ մնացել է Նոյի ձեռքով տնկված խաղողի այգիների մասին ավանդությունը:

ՀՆԱԳՈՒՅՆ ՀՐԱՇԱԿԵՐՏԸ

Առասպել՞ է, թե իրականություն, ավելի ստույգ՝ առասպելախառն իրականություն է հայոց Վասպուրական նահանգի Վան քաղաքի հիմնադրման մասին գրույցը, որն իր պատմության մեջ հիշատակել է քերթողահայր Մովսես Խորենացին: Երբ Շամիրամը Արա Գեղեցիկի՝ պատերազմում զոհվելուց հետո շրջում է Հայաստանում, Արարատյան դաշտից հարավ ընկած մի տարածքում՝ աղի ծովակի մոտ, տեսնում է մի երկայնածև բլուր, որ ձգվում էր դեպի արևմուտք: Սրանից հարավ «տարածվում է մի գեղեցիկ հովիտ, որ բլուրի արևելյան կողմից իջնում էր ծովի ափը»: Նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր: Այս վայրը իր մաքուր օդով ու գեղեցկությամբ դուր է գալիս Ասորեստանի թագուհուն, և նա ասում է. «Պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինել, որպեսզի տարվա շրջանի մի չորրորդ մասը, այսինքն՝ ամառային եղանակը, անցկացնենք Հայաստանում»: Նա իր ցանկությունը գործի է վերածում: Բերել է տալիս բազմաթիվ արհեստավորների, որոնք կատարելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի մշակման գործերում և սկսում է քաղաքի շինությունը:

Խորենացին շատ ճիշտ և գեղեցիկ է նկարագրել Վան քաղաքի դիրքն ու տեղը: Ինչպես այս դրվագից, այնպես էլ շարունակությունից երևում է, որ Պատմահայրը, անշուշտ, եղել է այս տեղերում և իր աչքով տեսել է: Ոչ պակաս վավերական է հնագույն քաղաքի շինարարական աշխատանքի մանրամասն նկարագրությունը: Շամիրամը հրամայում է՝ նախ գետի ամբարտակը կառուցել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն ու բարձր: Հետաքրքիր է, որ, ինչպես վկայում է Խորենացին, նախնական այդ կառույցն այնքան բարձր է եղել, որ տեղաբնակները նրա ճեղքվածքներում թաքնվել-պատսպարվել են թշնամական ասպատակությունների ժամանակ, «որպես թե ամրանալիս լինեին ապառաժ լեռների գագաթներին»: Այս հոյակապ շինությունն ավարտելուց հետո, տարիներ անց Շամիրամը գլուխ է բերում մի հրաշալի շինվածք ևս՝ ամուր պարիսպներով ու պղնձից շինված դռներով: Պարիսպներից ներս՝ քաղաքում կառուցել է տալիս բազմաթիվ ընտիր ապարանքներ՝ կրկնահարկ և եռահարկ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով, և յուրաքանչյուրում պատուհաններ՝ ըստ հարմարության: Սակայն ավելի լավ է հնագույն քաղաքաշինության այս անգերազանցելի նկարագիրը մեջբերենք այնպես, ինչպես գրել է Խորենացին՝ մեկ անգամ ևս հաստատելու, թե քաղաքներ կառուցելու գործում ինչպիսի ճարտարության ու բարձրագույն արվեստի էին հասել մեր նախնիները: «Քաղաքի կողմում էլ որոշում է կառուցել գեղեցկագույն և ընդարձակ փողոցներ: Շինում է նաև չքնաղ և զարմանալու արժանի բաղնիքներ՝ համապատասխան քաղաքի դիրքին ու պիտույքներին: Գետի մի

մասը, առուների բաժանելով, անցկացնում է քաղաքի միջով, բուրաստանների և ծաղկանոցների ոռոգման համար, իսկ մյուս մասը՝ ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի և շրջակայքի ոռոգման համար: Արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տնկում է բազմաթիվ առատաբեր ու գինեբեր այգիներ: Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հռչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմությունն»:

Միայն գեղեցկությունն ու հարմարավետությունը չեն, Շամիրամը մտածում է նաև պաշտպանական կառույցների մասին: Բացի քաղաքը շրջապատող ամրակուռ պարսպից, «Քարաժայռի դեպի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ և ոչ մի գիծ չի կարող մարդը գծել երկաթով, այդպիսի կարծր քարի մեջ զանազան սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր է փորել տալիս՝ հայտնի չի ինչ բանի համար, հրաշակերտում է: Իսկ քարաժայռի երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում էր: Եվ ոչ միայն այստեղ, այլև հայոց աշխարհի շատ տեղերում արձանների կանգնեցրեց և նույն գրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում նույն գրով սահմաններ էր հաստատում»:

Այսպես արարվում է հայոց հնագույն Վան մայրաքաղաքը: Այս տողերը կարդալով՝ կարելի է զարմանալ մեր հեռավոր նախնիների՝ քաղաքաշինական բարձրագույն գիտելիքների վրա: Նրանց յուրաքանչյուր քայլը նախապես կշռադատված, մտածված էր, յուրաքանչյուր շինություն անկրկնելիորեն գեղեցիկ ու ամրակուռ՝ տեղանքին ներդաշնակ ու համապատասխանող: Իսկ օդի մաքրությունը պահպանող կանաչապատ տարածքների ու այգիների առկայությունն ուղղակի ապշեցուցիչ էր: Այժմ էլ կարելի է մոռացված շատ բաներ սովորել հնագույն ճարտարապետներից ու արհեստավոր վարպետներից՝ նոր քաղաքներ նախագծելիս և կառուցելիս, հները նորոգելիս: Մի երևույթ, որ այսօրվա քաղաքներում հաճախ աններելիորեն անտեսում ենք:

ՎԱՐԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՐԸ

Եղիշե Չարենցի հանրահայտ բանաստեղծություններից մեկն ունի «Հարդագողի ճամփորդները» վերնագիրը: Վերհիշենք առաջին տողերը.

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու,
Երկու ճամփորդ՝ պատառոտված շորերով...

Առօրյա խոսակցության ժամանակ հաճախ ենք օգտագործում «Հարդագողի ճանապարհ» արտահայտությունը. այդ ճանապարհով ընթանում են նրանք, ովքեր իրենց երազանքի թելերից կախված՝ հոգով ու մտքով սավառնում են տիեզերական հեռաստաններում, ինչ-որ տեղ երկրի, միաժամանակ երկնային տարածությունների բնակիչներ են: Այդպիսի ճանապարհ իրականում գոյություն չունի. այն Ծիր-Կաթինն է՝ գիսավոր աստղի հետագիծը, որը լույսի շողերի ոսկեդեղին փունջ է, որ երկար ճանապարհի նման անսահման հեռուներից կախվում է երկրի վրա, և անգն աչքով երբեմն-երբեմն երևում է: Տեսնողներն այդ երևույթի հետ են կապում իրենց կյանքում կատարվելիք փոփոխությունները, բախտի շրջադարձերը, ծնունդն ու մահը:

Բայց գիտե՞նք արդյոք, որ «հարդ» և «գող» արմատներից կազմված «հարդագող» բառը հայերի գիտակցության ու հավատալիքների մեջ ծագել է հնագույն առասպելից, ավելի որոշակի՝ Վահագն հեթանոսական աստծո գործունեությունից: Վահագնը, ըստ պատմահայր Մովսես Խորենացու, երկնքի ու երկրի որդին էր, որը ծնվել էր ծիրանի ծովում աճած շիկակարմիր եղեգան փողից: Նա հուրիեր մորուք ուներ, և աչքերն արեգակներ էին: Մովսես Խորենացին «Հայոց պատմություն» գրքում մեջբերել է Վահագնին վերաբերող ժողովրդական վիպասքի մի գեղեցիկ հատված, որն այսօր էլ՝ իբրև հայոց հնագույն բանաստեղծության նմուշ, դասագրքային մեծագույն նշանակություն ունի: Նախկինում ամբողջ վիպասքը Գողթն գավառի գուսանները երգել են փանդիռների նվագակցությամբ: «Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես այս ոմանք երգում էին փանդիռներով,- վկայում է պատմահայրը,- դրանից հետո երգում ասում էին, թե կռվել է վիշապների հետ և հաղթել, և Հերակլեսի քաջագործություններին շատ նման բաներ էին երգում նրա մասին»:

Հեթանոս հայերի հավատալիքներում Վահագնը քաջության ու հաղթանակի աստվածն էր: Հայոց Տրդատ թագավորի առաջին հրովարտական, որ իր պատմության մեջ ներկայացրել է հինգերորդ դարի մատենագիր Ագաթանգեղոսը, ասված է. «Քաջ Վահագնից թող քաջությունը բաժին հասնի ձեզ»: Վահագնը կռիվներում հաղթել է վիշապներին, ասել է թե՛ մեր երկիր ներխուժած բազմաթիվ թշնամիների, և այստեղից էլ ծագել է նրա մականունը՝ Վիշապաքաղ: Սակայն «հարդագող» բառի և Ծիր-Կաթինի հետ հեթանոսական այս աստծո աղերսների մասին Խորենացին և Ագաթանգեղոսը ուրիշ

ոչինչ չեն ավելացնում: Այդ բացը լրացրել է յոթերորդ դարի մատենագիր Անանիա Շիրակացին, որը մեջբերել է ժողովրդական գրույցի մի պատառիկ ևս: Ըստ նրա վկայության՝ Վահագնը ամուսնացած է եղել Ասորեստանի թագավոր Վարշամի դստեր հետ: Այդ Վարշամը հավանաբար չափազանց ազաի և ժլատ է եղել, ամեն ինչ սեփականել է և մյուսներին ոչինչ չի թողել, նույնիսկ իրեն է վերցրել նժույգների համար ուտելիք ծառայող ոսկեդեղին հարդը, որը նրա ախոռում անսահմանորեն դիզված էր, այնինչ բոլորի նժույգները քաղցում էին՝ կերակուր չլինելու պատճառով: Եվ ահա Վահագնը վիթխարի պարկերով գողանում է իր ժլատ ու ազաի աներոջ հարդը՝ մյուսներին բաժին հանելու, և շալակած տանում է երկնային տարածություններով: Ժողովրդական գրույցն ասում է, որ ճանապարհին ահռելի ծանրությունից պատռվում է պարկը, և հարդը փռվում է երկինքն ի վար՝ լուսավոր ճանապարհի թողնելով: Դա նաև երազների կատարման, հույսի ու հավատի, ժողովուրդների բարեկեցության ճանապարհն է՝ Հարդագողի ճանապարհը:

ՀԻՆԱՎՈՒՐՑ ՀՐԱՇԱԼԻՔԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Պատահել է՝ Ախուրյանի գետի այս ափից՝ Ծաղկոցածորի բարձունքից հեռադիտակով նայել են հինավուրց Անի մայրաքաղաքի ավերակներին, և այնտեղ, ուր եղել է կենտրոնը, աչքի է զարնել կիսաքանդ մի շինություն. Մայր Տաճարն է, որ տասներորդ դարավերջին հայոց Կատրամիդե թագուհու հովանավորությամբ կառուցել է Տրդատ ճարտարապետը: Քիչ թե շատ կանգուն մնացած պատերն անտերությունից ու երկրաշարժից ճաք են տվել-ճեղքվել, և հեռու-հեռվից դիտողին երևում են կույր ու բաց ակնախոռոչի նման: Ակամա մտածում ես, որ, ինչպես մարդիկ, եկեղեցիները նույնպես ունեն իրենց կենսագրությունն ու ճակատագիրը՝ ծնվում են, ապրում երիտասարդության, իմաստուն հասունության ժողկուն շրջանը և աստիճանաբար նահանջում, հնանում, ավերակվում, եթե հոգատար ձեռքի տակ, ինչպես հնուտ բժշկի ներգործության ներքո, չեն նորոգվում, վերակենդանանում:

Անիի Մայր Տաճարը... Ինչքան պատմություններ, լեգենդներ ու ասքեր են հյուսված նրա զարմանահրաշ ազդեցության, առինքնող գեղեցկության ու ամրակուռության, կախարդական զարդաքանդակների շուրջ: Աշխարհի յոթ հրաշալիքներից չէր, անշուշտ, բայց գեղեցկատես Անիի զարդն էր հաստատապես, որի անմնան ճարտարապետությամբ ժամանակին հիանալու բախտն են ունեցել բազմահազար այցելուներ: Պատահական չէ, որ տասներկուերորդ դարի պատմիչ Սամվել Անեցին այդ եկեղեցին բնորոշել է «սխրատեսիլ» մականունով: Իսկապես որ, սխրատեսիլ... գլխին՝ երկու մետրանոց արծաթյա խաչ, որ մշտապես շողշողում էր ամեն լուսունթի, գավիթում՝ հեռավոր Չինաստանից բերված ճենապակե վիթխարի օսի, որն անսովոր լուսավորում էր յուրաքանչյուր անկյուն: Մայր Տաճար ոտք դնողը մոռանում էր իրեն ամբողջությամբ և ճգնակյացի նման անմնացորդ տրվում հոգևոր աշխարհի վերերկրային հոսանքներին: Մայր Տաճարի երկարակեցությունն ապահովվելու համար յուրաքանչյուր մանրուք հաշվի էր առել Տրդատ ճարտարապետը՝ և ամրագամ սյուներ ու խոյակ, և միաձույլ գմբեթ, և անխորտակ պատեր՝ հիմքում տեղադրված Քրիստոսի խաչափայտի մի նշխար-մասունք, որ հատուկ այդ նպատակով Անի էր ուղարկել Բյուզանդիայի հայազգի նշանավոր կայսր՝ Վասիլ Երկրորդ Ծիրանածինը, որպեսզի նորակառույց եկեղեցին հրաշագործ ուժ ունենար և բուժեր հավատացյալ հիվանդներին: Միայն մի բան էր «մոռացել» հայոց միջնադարի մեծահռչակ ճարտարապետը. թուրք-սելջուկ քոչվորի՝ ամեն ինչ ավերակող ներկայությունը...

1066-ին, երբ թուրք-սելջուկների արյունարբու սուլթան Արփ-Արսլանը գրավում է անօգնական ու անպաշտպան Անի մայրաքաղաքը, ի թիվս այլ եղեռնագործությունների, հանել է տալիս Մայր Տաճարի գմբեթի արծաթե խաչը և նրա փոխարեն տեղադրում...

նժույզի մի ծանրաքաշ պայտ՝ քոչվոր թուրքերի այն ժամանակի զինանշանը՝ համաձայն մզկիթների մոլլաների ռազմաշունչ պատգամի, թե՛ որտեղ կպավ քո նժույզի պայտը, քոնը համարիր և քո հայրենիքը:

Այդ մասին վկայել է մեկ ուրիշ ականատես-պատմիչ՝ Մխիթար Անեցին. նա գրում է. «Եվ Խլաթ քաղաքից բերին նալ մի ծանրագին և խաչի փոխարեն տեղադրեցին Կաթողիկե եկեղեցու գմբեթին: Իսկ արծաթե խաչը տարան-գցեցին Դվինի կամրջի մոտ գտնվող իրենց մզկիթի դռան առջև, որպեսզի թուրք նամազավորները տրորելով անարգեն ու անցնեն»: Այդպես՝ շուրջ հարյուր տարի այդ պայտը՝ իբրև անարգանք, բազմել է հայոց քրիստոնեական հրաշակառույցի գմբեթի վրա, և եկեղեցին ամենայն հավանականությամբ վերածվել է մահմեդական մզկիթի...

Մեկ դար անց, երբ փոխվել են դաժան պայմանները, անեցիները, ինչպես փաստագրում է նույն պատմիչը, «սիրտ առնելով՝ հանեցին պայտը և Կաթողիկեի գլխին կանգնեցրին նախկին խաչը»: Այսպես՝ Բագրատունյաց արքայական ժամանակաշրջանից հետո Անիի Մայր Տաճարը շարունակել է ապրել սրտապնդության ու վախի փոխնիփոխ և խառնակ օրերում, և ընդամենը մեկ անգամ ևս, իհարկե, ոչ երկարատև, վերագտել է իր երիտասարդական զարթոնքն ու փառքը. դա Ջաքարյանների իշխանության ժամանակահատվածն էր, երբ Հայաստանն ազատագրվեց օտար հորդաների ասպատակությունից, երբ միջնադարյան բանաստեղծի պատկերավոր արտահայտությամբ՝ «պայծառացան հայոց եկեղեցիները»: Ափսոս, որ պայծառության ու զարթոնքի այդ փառավոր վերելքը նույնպես կարճ տևեց, և Մայր Տաճարը, իբրև մեր ժողովրդի հինավուրց պատմության ու ճակատագրի վավերագիր-վկա, այժմ էլ օտարի անտարբեր հայացքի ներքո շարունակում է իր կիսավեր գոյությունը:

«ՀԱՐ ԱՉՔԻ» ՋՈՐԵՐԸ

Ամեն օր մարդն անցնում է իր վրա սևեռված ուրիշ հայացքների միջով՝ մի մասը ետ է վանում, իսկ մյուսները, այսպես թե այնպես, իրենց ուղղակի և անուղղակի ազդեցությունն են թողնում: Կյանքում պատահած ձախորդություններն ու փորձությունները հաճախ բացատրվում են «չար աչքի» ներգործությամբ, որը, տեսանելի կամ աներևույթ, ուղեկցել է մարդուն՝ նրա պատմության սկզբից ի վեր: Եվ մարդը հորինել է դրա դեմ պայքարելու շատ եղանակներ:

Մովսես Խորենացու «Չայոց պատմությունից» մեզ է հասել մի հետաքրքիր ավանդություն, ըստ որի Երվանդ թագավորը (Ն.Ք.Ծ. 1-ին դար) «չար աչք» ուներ: Վաղ առավոտյան՝ արթնանալիս, պալատականներից կամ մերձավորներից ում որ նայում էր առաջին անգամ, նրա հետ անպայման մի դժբախտություն էր պատահում: Ինչ անում-չէին անում, չէին կարողանում ազատվել Երվանդ արքայի հայացքի ծանրությունից: Նույնիսկ հմայություններն էլ չէին օգնում. այդքան զորավոր էր «չար աչքի» ներգործությունը:

Տեսնելով, որ նրա հետ շփվող մարդկանց դժբախտություններն օր-օրի բազմապատկվում են, պալատականներն, ի վերջո, գտան դրանից փրկվելու հնարը: Ամեն օր ապառաժ քարեր էին բերում, շարում արքայի ննջարանի դիմաց, որ նա, հենց արթնանար, հայացքն առաջինն ընկներ այդ քարերի վրա, և դրանք իրենց խորքում փակեին արքայի աչքի ճնշող զորությունը: Առավոտյան պալատականները տեսնում էին, որ հսկա վիմաքարերը մեջտեղից ճեղքվել են երկու մասի: Եվ մարդկանց համար արդեն հեշտ էր Երվանդի հետ շփվելը. «չար աչքի» ներազդող ուժը թուլացել, մարդկանց համար անվնաս էր դարձել, որովհետև նրա առաջին զոհերը... ապառաժներն էին:

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԽԱՂԸ

Մովսես Խորենացին «Հայոց պատմություն» գրքում մշակել և մեզ է ներկայացրել հեթանոսական շրջանի շատ առասպելներ, դեպքեր ու դիպվածներ: Բայց նրա կյանքն էլ մի յուրօրինակ առասպել էր, ճակատագրի տխուր մի խաղ, որ ոչ բոլորին էր վիճակված: Հինգերորդ դարից մեզ է հասել գրավոր մի ավանդություն, ուր մեկնաբանված է պատմահոր կյանքի կարևոր գաղտնիքներից մեկը: Ըստ դրա՝ Խորենացին Ալեքսանդրիա քաղաքում բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադառնում է հայրենիք: Նրա հանդեպ ծայր են առնում ծանր հալածանքներն ու հետապնդումները: Դրանք այն աստիճան սպառնալի էին, որ նա ստիպված թաքնվում է Հայաստանի տարբեր նահանգներում՝ ոչ մեկին չհայտնելով իր ով լինելը: Այդպես՝ ծայտված, հաճախ աղքատ ու անօթևան, նա անցկացնում է օրեր, ամիսներ, երեսուն երկարուծիգ տարի, իսկ դա արդեն մի անբողջ կորցրած կյանք էր...

Բայց, թեկուզ մեծ ուշացումով, գալիս է հատուցման ժամը: Չգիտես պատահականությո՞ւնը, թե՞ Աստծո ուղարկած հրեշտակը նրան փրկում է հետագա հալածանքներից: Հայաստանում կաթողիկոս է դառնում նրա դասընկեր Գյուտը, որը հրամայում է՝ եթե ողջ-առողջ է, անպայման գտնել Մովսես Խորենացուն, որպեսզի նրան վերադարձնի մոռացության մատնված նախկին հռչակն ու պատիվը: Որո՞նումներն ապարդյուն են անցնում: Եվ ահա Վաղարշապատի շրջակայքի մի գյուղ այցելած Գյուտ կաթողիկոսի պատվին տրված ճաշկերույթի ժամանակ հյուրասեղանին է մոտենում մի ծեր օտարական: Հավաքվածները խնդրում են, որ նա մի բան ասի: Ծերունին սկզբում հրաժարվում է, բայց հետո տեղի է տալիս շատերի խնդրանքին: Քերթողական ոճով ասված ճառն այնպիսի ցնցող տպավորություն է թողնում, որ ամենքը խոնարհվում են նրա առջև: Կաթողիկոսն ուշադիր նայում է ծերունու կերպարանքին, վերհիշում ծանոթ դիմագծերը և հանձին նրա՝ ճանաչում վաղուց կորցրած դասընկերոջը: Խանդավառ բարձրանում է աթոռից, համբուրում Մովսեսին և հետը տանելով՝ Բագրեվանդի և Արշակունյաց եպիսկոպոս է ձեռնադրում: Հետո, հաշվի առնելով նրա իմաստությունը, գիտելիքները, Սահակ Բագրատունի իշխանն առաջարկում է գրել հայոց պատմությունը, մի առաջարկ, որ Խորենացին կատարում է հրաշալի հորինվածքով, անաչառ ստուգաբանությամբ, իբրև հայ ժողովրդի հնագույն պատմության անփոխարինելի դասագիրք:

ԱՆՅՈՒՇ ԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼԸ

Հնաշխարհի թագավորները, կարևոր որոշումներ ընդունելիս, հաճախ են դիմել գուշակների և իմաստունների օգնությանը: Մեզ է հասել այդպիսի մի պատմություն, որը գրի է առել հինգերորդ դարի մատենագիր Փավստոս Բուզանդը:

Հայոց Արշակ թագավորին խաբեությամբ իր մոտ կանչելուց և բանտարկելուց հետո պարսից արքա Շապուհ Երկրորդ Երկարակյացը չի համարձակվում նրա հետագա ճակատագրի վճիռը կայացնել: Ստիպված իր մոտ է կանչում աստղագուշակ իմաստուններին: Նրանք մի օր ու գիշեր մտածելուց հետո ասում են թագավորին. «Մարդ ուղարկիր հայոց աշխարհը, այնտեղից բերել տո՛ւր մոտ երկու բեռ հող և մի ամանով ջուր: Հետո հրամայիր, որ քո խորանի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը, ապա դու ինքդ, հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած, նախ տա՛ր խորանի այն տեղը, որտեղ բնական գետինն է, և նրան հարցնունք արա՛: Հետո նրա ձեռքը բռնած՝ հայկական հող շաղ տված տեղը տա՛ր և լսի՛ր, թե ինչ կխոսի, և այն ժամանակ կգիտենաս, թե երբ նրան արձակելու լինես Հայաստան, քո ուխտն ու դաշինքը կպահի՞, թե՞ ոչ: Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի, իմացիր, որ հայոց աշխարհի հասնելուն պես՝ հենց նույն օրը, լեզուն կբանեցնի, նույն պատերազմը կնորոգի քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամությունը կշարունակի»:

Շապուհ թագավորն այդպես էլ վարվում է: Պարսկական հողի վրա Արշակը խեղճանում, խոնարհվում է Շապուհի առաջ, իսկ երբ ոտք է դնում հայկական հողին, ինչպես վկայում է Փավստոս Բուզանդը, «սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով՝ լեզուն փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդիներին՝ իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը: Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն (արքայական աստիճանը) եք հափշտակել, բայց ես թույլ չեմ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»:

Այսպես՝ առավոտից մինչև երեկո Շապուհը շատ անգամ է փորձում նրան, և միշտ հայկական հողի վրա Արշակը խստանում, ըմբոստանում է, իսկ խորանի բնական հողի վրա լալիս է ու զղջում նախկին ասածի համար: Եվ տխուր վախճան է ունենում հայրենի հողի գերբնական ուժն ու զորությունը գովերգող և Արշակ Երկրորդ թագավորին ոգիացնող այս առասպելախառն պատմությունը: Մատենագրի վկայության համաձայն, «Շապուհը հրաման է տալիս բերել երկաթե շղթաներ, կապել Արշակի պարանոցը, ոտքերն ու ձեռքերը, տանել նրան Անդձըշն բերդը, որին ասում են Անհուշ բերդ, և կապած պահել այնտեղ՝ մինչև մեռնի»:

Հիմա՝ դարերի մշուշում, մոռացության շեղջի տակ թաղվել են և՛ հայոց Արշակ թագավորը, և՛ Շապուհը, իսկ այս գեղեցիկ առասպելը մնացել է նորանոր սերունդներին ի պահ և իբրև ուսանելի դաս՝ մայր հողի հավերժության սուրբ խորհուրդը վավերացնող:

ԱՅԾԵՄՆԻԿ ԱՆԵՑԻ ՆԵՏԱԶԻԳՐ

Այսօր էլ կարելի է հետ քաշել դարերի վարագույրը և մտովի տեղափոխվել 12-րդ դարավերջի Անի մայրաքաղաքը, ուր հազարավոր բնակիչների հետ ապրել է նաև մի մանկամարդ աղջիկ՝ Այծեմնիկ անունով: Պատահել է՝ նա զենք ու զրահով հանդերձավորված, հայ զինվորների հետ կանգնել է Սմբատաշեն պարսպի վրա և նետահարել քաղաքը պաշարած թշնամուն: Շատերը, ո՛չ թշնամական զորքից, ո՛չ էլ յուրայիններից չեն իմացել, որ նետերն անվրեպ արձակողը կին է: Նա, կարծես, քարաշեն ու պահապան պարսպի կենդանի շարունակությունն է դարձել՝ աչքերի մեջ արդարացի վրեժ, գլխին՝ զինվորական սաղավարտ, գոտիից կախված՝ երկսայրի սուր ու կապարձ: Թերևս միայն սաղավարտի տակից դուրս ընկած և թեթև քանուց ծածանվող երկար վարսերն են մատնել, որ զինվորների մեջ ահ ու սարսափ տարածող վրիժառուն մի փոքրիկ աղջիկ է, որն անձամբ չի տեսել, բայց ծնողներից ու Անիում շրթեշուրթ տարածված լեգենդից իմացել է, որ ճիշտ այնպես, ինչպես այդ օրհասական օրը, հարյուր տարի առաջ թուրք-սելջուկների առաջնորդ Արփ-Արսլանն իր զորքով գրավել է Անին և հազարավոր անեցիների կոտորելուց ու գերեվարելուց հետո, հանել է տվել քաղաքի Մայր Տաճարի գմբեթի մոտ երկու մետրանոց արծաթե խաչը և փոխարենը տեղադրել իրենց զինանշանը՝ մի վիթխարի պայտ: Ապա Անին 60000 դահեկանով վաճառել է Շեհդադյան Սանուչեին: Դա սարսափելի անարգանք էր նախնիների հանդեպ, և անեցի աղջկա աչքերում փոխվել էր անզիջում վրեժի, որովհետև այդ օրն էլ, ինչպես 100 տարի առաջ՝ թշնամին նույնն էր՝ նույն թուրք-սելջուկը: Այս անգամ, հաստատ է, թշնամին չի գրավելու քաղաքը, Ախուրյան գետի վրայի շարժական կամուրջը անանցանելիորեն հետ է քաշված և պաշտպանող հայ զինվորների շարքում անվեհեր մարտնչում է ինքը՝ Այծեմնիկ Անեցին: Ահագնացած վրեժը չի թողնելու, որ անցյալը կրկնվի նույնությամբ:

Պատմությունը մանրամասնորեն չի ներկայացրել Այծեմնիկ Անեցու ողջ սխրագործությունը, բայց հայտնի է, թե իր գոյությամբ և հմուտ նետավարությամբ նա ինչքա՛ն է ոգևորել Անիի պաշտպաններին, այդ ճակատամարտն ավարտել են հաղթությամբ: Եվ պատմագիրներն անմահացրել են Այծեմնիկի անունը՝ իբրև հայրենիքին հայ կնոջ մեծագույն նվիրվածության խորհրդանիշ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԹԱԳՈՒԻՅՒՆ

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ և առաջին կենսագիր Կորյունը վկայում է, որ հայոց գրերի գյուտից հետո իր երանելի ուսուցիչը, դեռևս Սամոսատ քաղաքում, Սուրբ Գրքի Սողոմոնի առակները հունարեն բնագրից թարգմանել է ու իր ձեռքով գրել հայերեն առաջին նախադասությունը՝ «ՃԱՆԱԶԵԼ ԶԻՍԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ԶԱՆՃԱՐՈՅ»:

Մեսրոպյան այդ առաջին նախադասությունը վերածվել է ասացվածքի և դարեր շարունակ դարձել հայ ժողովրդի գոյության կարևորագույն նախապայմաններից մեկը: Որ մինչև սեփական ինքնատիպ մատենագրություն ունենալը՝ մեր լեզվի առաջին ուսուցիչները զբաղվել են թարգմանական արվեստով, վկայում է նաև Աստվածաշնչի առաջին դրվագների նախնական խմբագրումը, որ կատարել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Կորյունը նշում է, որ թարգմանությունը նրանք արել են արագորեն, որովհետև այն ուներ զուտ ուսուցողական, քրիստոնեական վարդապետությունը ժողովրդի ստվար զանգվածի մեջ մատչելի ու հասկանալի լեզվով տարածելու, ամրապնդելու դեր ու նպատակ և, բնականաբար, հեռու էր կատարյալ լինելուց:

Դեռևս 5-րդ դարում Աստվածաշնչի գիտական թարգմանության ու խմբագրության կարիքը զգացվեց: Այդ նպատակով Ասորեստան և Հունաստան ուղևորվեցին Մաշտոցի ու Սահակ Պարթևի առաջին աշակերտները: Պատմությունը պահպանել է նրանցից մի քանիսի անունները՝ Կորյուն, Եզնիկ Կողբացի, Ղևոնդ Երեց, Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Արծան, որոնք եբրայերեն, ասորերեն և հունարեն բնագրերից հայերեն թարգմանեցին ամբողջ Աստվածաշունչը: Եվրոպացի հայագետ Լակրոզը, խոսելով Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մասին, այն կոչել է «Թագուհի թարգմանությանց»: Այս գնահատականը, որ հաճախակի կրկնել են ուրիշները, երկու կարևոր կողմ ունի. նախ՝ ընդգծում է հայերեն թարգմանության ճշգրտությունը և հավատարմությունը բնագրին՝ ուրիշ լեզուներով թարգմանությունների համեմատությամբ և ապա՝ լեզվի ու ոճի գեղեցկությունն ու վեհությունը:

5-րդ դարում ոսկեդեմիկ գրաբարով կյանքի կոչված «Թարգմանությանց թագուհին» հետագայի աննշան խմբագրումներով ու ճշգրտումներով այսօր էլ շարունակում է իր հաղթական ճանապարհը:

«ՁԻ ՀՈՒՅԺ ԳԵՂԵՑԻԿ ԷՐ»

Ըստ պատմահայր Մովսես Խորենացու՝ հայոց Տիրան թագավորը Երանյակ անունով մի սիրուն դուստր ուներ, ում կնության է տալիս Բագրատունի իշխանին, որը քաջ ու սրտոտ մարդ էր: Արքայադուստր Երանյակը հրեշտակի պես գեղեցիկ էր, իսկ նրա անուսինը տգեղ էր ու կարճահասակ: Եվ Տրդատը սիրում էր իր լուսամարմին կնոջը, իսկ կինը «քամահրում էր նրան, հոնքերը կիտում, շարունակ իրեն «վայ» տալիս, որ «իր նման չքնաղ ու ազնվագարն արքայադուստրը ստիպված է մի տգեղ ու ծագունով հասարակ մարդու հետ ապրել»: Այդ պատճառով էլ Տրդատը, զայրանալով, «մի օր սաստիկ ծեծում է նրան, կտրում է նրա շեկ մազերը, փետտում է խոպոպիկները և հրամայում է՝ քարշ տալով դուրս գցել սենյակից»: Իսկ ինքը, վախենալով Տիրան արքայի վրեժից, փախչում է Մարաստանի կողմերը: Երբ հասնում է Սյունյաց աշխարհ, իմանում է, որ Տիրան թագավորը մահացել է, ուստի այնտեղ էլ մնում է:

Մի օր Սյունյաց Բակուր նահապետը նրան ընթրիքի է հրավիրում: Հեթանոսական ճոխ խնջույքի ժամանակ Տրդատը սիրահարվում է մի գեղեցիկ կնոջ, ով հեզաճկուն պարում էր հրավիրվածների առաջ:

- Այս կնոջն ինձ տո՛ւր,- ասում է Բակուրին:

- Չեմ տա,- պատասխանում է Բակուրը,- որովհետև իմ հարճն է:

Բայց սիրահարված երիտասարդն անկոտրում էր: Նա ծաղկամանն իբրև զենք է գործածում, հալածում բոլոր սեղանակիցներին և գեղեցկուհի հարճի հետ, ում անունը Նազենիկ էր, փախչում է Սյունիքից:

Նազենիկի մասին Խորենացու գործածած պատկերավոր արտահայտությունը՝ «Ձի հույժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ» դարձել է թևավոր խոսք:

Հինավուրց այս պատմությունը հանրահայտ «Հարճը» պոեմում մշակել է Դանիել Վարուժանը:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ վկայություններ կան, որ հին աշխարհի գիտնականներին հայտնի էր Երկրի ձվաձևության գաղտնիքը: Նրանք դա որոշել են Արեգակի, Լուսնի տեղաշարժերը, ցերեկվա ու գիշերվա հաջորդականությունն ուսումնասիրելով: Մեզ է հասել և այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում է հինգերորդ դարում հունարենից գրաբար թարգմանված մի հնագույն վիպասք, որը կրում է «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» վերնագիրը:

Այդ վեպում Երկրի ձվաձևության մասին մի հետաքրքիր տեղեկություն կա, ըստ որի՝ «Փիլիպոս թագավորը (Ալեքսանդր Մակեդոնացու հայրը) մի օր նստել էր արքայական դրախտանման պարտեզում, ուր կային բազմաթիվ վայրի և ընտանի հավքեր: Եվ մինչ նա զբաղվում էր նրանց կերակրելով՝ հանկարծ մի հավք վազելով եկավ և թագավորի գոգին ձու ածեց: Ձուն գլորվեց, ընկավ գետին և ջարդվեց: Ձվից դուրս ելավ մի վիշապ օձ և շրջելով իր ջարդված պատյանի չորսբլուրը՝ փորձեց նորից մտնել այնտեղ, որտեղից դուրս էր եկել: Եվ գլուխը ձվի կեղևին խփելով՝ վիշապը սատկեց: Եվ սաստիկ խռովվեց Փիլիպոսի հոգին: Այդ ժամանակ պարտեզում էր գտնվում Անտիփոսա անունով մի նշանավոր գուշակ: Կանչեց նրան թագավորը և խնդրեց վերծանել իր տեսած նշանները: Եվ Աստծո ազդեցությամբ և թելադրանքով Անտիփոսան ասաց.

- Թագավոր, դու զավակ ես ունենալու, ով շրջելու է աշխարհում, և ամենքին իրեն է հնազանդեցնելու, և ինքը չի հնազանդվելու ոչ մեկին, և իր աշխարհը վերադառնալիս՝ վախճանվելու է, քանի որ վիշապն արքայական խորհրդանիշ է, և ձուն աշխարհի պատկերն է, որտեղից վիշապը դուրս գալով՝ պտտվում է աշխարհի շուրջը և կամենալով նորից իր նախկին բունը մտնել՝ չի հասցնում, մեռնում է այդ ճանապարհին»:

Ըստ այդ գիտական գուշակության՝ ձուն Երկիր մոլորակի անսահման փոքրացված պատկերն է, որն իր զորքով նվաճելու է աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացին:

Ինչպես ցույց է տալիս Ալեքսանդրի հետագա գործունեությունը, այդ գուշակությունը ճշգրտորեն կատարվել է:

ԱՐՔԱՅԻ ՎՐԵԺԸ

Հայ մարդը որտեղ էլ եղել է, անխաթար է պահել ազգային պատկանելության զգացումն ու արժանապատվությունը: Այդպիսի հիշարժան էջերով հարուստ է հայոց պատմությունը: Մեջբերենք միջնադարի մատենագիրների վկայակոչած հետաքրքիր գրույցներից մեկը:

Երբ 1045-ին բյուզանդացիները գրավում են Անի մայրաքաղաքը և Բագրատունիների վերջին թագավորին՝ Գագիկ Երկրորդին աքսորում իրենց անժայրածիր կայսրության հեռավոր նահանգներից մեկը, տեղաբնակները ատելությամբ են ընդունում եկվորներին: Հայերի հանդեպ առանձնակի ատելությամբ էր լցված բյուզանդացի քահանայապետ Մարկոսը, ով, ի նշան արհամարհանքի, իր շան անունը դրել էր «Արմեն»: Եվ ահա, օրերից մի օր, Գագիկ թագավորն իջևանում է այդ քահանայապետի մոտ: Վերջինս ուրախությամբ է ընդունում նրան, հրավիրում խնջույքի: Երբ գինովանում են, թագավորն ասում է.

- Ես լսել եմ, որ դու մի ազնվացեղ շուն ունես, ինձ ցույց տուր:

Մարկոսը շփոթմունքից այլայլվում-շիկնում է, բայց Գագիկ Բագրատունին նորից է պնդում ասածը.

- Կանչի՛ր, թող գա այստեղ:

Մարկոսը ստիպված կանչում է ազնվացեղ կենդանուն, բայց ոչ թե իր իսկական, այլ ուրիշ անունով: Իսկ շունը, որ պառկած էր դռան կողքին, չի մոտենում: Այդ ժամանակ հայոց թագավորն ասում է.

- Ի՛ր անունով կանչիր:

Եվ, ինչպես գրել են միջնադարի մատենագիրներ Սամվել Անեցիին և Կիրակոս Գանձակեցիին, «երբ քահանայապետը կանչում է՝ «Արմեն, Արմեն», շունն անմիջապես բարձրանում է տեղից ու մոտ գալիս: Թագավորն ասում է.

- Ինչո՞ւ ես դրան այդ անունը դրել:

- Որովհետև լակո՞տ է,– պատասխանում է Մարկոսը:

Գագիկ թագավորը հրաման է տալիս իր սպասավորներին.

- Բերեք մի մեծ պարկ և շանը գցեք նրա մեջ:

Սպասավորները հազիվ են կարողանում շանը տեղավորել պարկում: Մարկոսը կարծում էր, թե Գագիկը կամենում է իր հետ տանել կենդանուն և բարկանում է ծառաների վրա:

Հայոց թագավորն ասում է.

- Պարկը գցեք նաև քահանայապետին, որ տեսնեմ՝ լակո՞տ է շունը, ինչպես նա ասաց:

Իսկ Մարկոսը լալիս էր ու աղաչում, որ թագավորը ների իր հանցանքը: Բայց Գազիկ թագավորն անհողորդ էր:

- Այժմ մտրակով այնքան հարվածեք պարկի միջի այդ երկու շներին, որ իրար ուտեն, – բարկությամբ հրամայում է նա:

Սպասավորներն այդպես էլ անում են: Հարվածներից գազազած կենդանին ցավի կսկիծից պատառ-պատառ է անում Մարկոս քահանայապետին, մինչև նա մեռնում է: Հոգեվարքի վերջին պահին Գազիկ Բագրատունի թագավորն ասում է.

- Այժմ իմացիր՝ լակո՞տ է Արմենը:

Այդպես՝ նա իր արդար վրեժն է լուծում օտարից՝ հայ ժողովրդի արժանապատվությունը կոպիտ կերպով վիրավորելու համար: Այդպես՝ տարիներ անց, Գազիկ թագավորի սերունդները հիմնում են իրենց անկախ ու ազատ պետությունը՝ Կիլիկիայի Հայկական թագավորությունը:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՐՍԱՏԵՂԻ

Հեծյալ որսորդների մի խումբ, Սյունյաց Բաբիկ իշխանի առաջնորդությամբ, հետապնդում է մի եղջերուի: Արևը թիկունքից է, և նրանց ստվերները փռել է առջևում, և նրանք վարգում են սեփական ստվերների վրայով: Այդ հանգամանքը և առանց այն էլ դժվարանցանելի, նեղլիկ ու քարքարոտ կածանն ավելի է դանդաղեցնում ձիավորների ընթացքը: Չորսբուլորն ուղղահայաց ու անմատչելի ժայռեր են, և խեղճ եղջերուն կածանից շեղվելու ոչ մի հնար չունի: Նրա առջև անսպասելիորեն բուսնում է մի փոքրիկ բլուր, և ազատվելու միակ հնարավորությունը բլրալանջն ի վեր ընթանալն է: Բայց, ո՛վ հրաշք. հենց որ կենդանու ոտքերը կաշում են կանաչապատ լանջին, կիսով չափ խրվում են հողի մեջ: Եղջերուն կաշվից դուրս է գալիս, որ մի կերպ փոխի ոտքերը, բարձրանա, փրկվի մոտեցող հետապնդողներից, բայց ինչ շարժում էլ որ անում է, ավելի է խրվում բլրալանջի փափուկ շերտերում: Հողը, թվում է, բացել է երախը և ամբողջությամբ կուլ է տալիս խեղճ կենդանուն: Այդպես էլ լինում է: Եղջերուն այժմ դարձել է շարունակ հետ գնացող, ճեղքվող հողաբլուրի գոհը, և խուսափել հնարավոր չէ այլևս:

«Բաբիկը,- գրում է 13-րդ դարի մատենագիր Ստեփանոս Օրբելյանը,- արագաքայլ ձիով հետապնդելով՝ եղջերուի հետևից բարձրանում է բլուրը: Եվ այդ ժամանակ ձիու ոտքերը խրվում են հողի մեջ, իսկ փախչել փորձող եղջերուն աներևութանում է: Սյունյաց տեր Բաբիկը, ձիուց իջնելով, բազմությանը հրամայում է նրա խրված ոտքերը դուրս քաշել բլրից: Եվ երբ Բաբիկի շքախմբի բազմությունն ուժգնորեն դուրս է քաշում, կրկին սաստիկ զարմանք ու ահ է համակում բուլորին, որովհետև ձիու ոտնատեղերից անուշահոտություն է բուրում և գրեթե ամբողջ գավառաձորը լցնում»:

Այնուհետև քանդում են հողը և նրա տակ տեսնում են չքնաղաշեն մի եկեղեցի: Գարտարապետական այդպիսի կառույց ուրիշ ոչ մի տեղ չկար: Դա հին աշխարհում մեծ հռչակ ունեցող Շաղատի Ստեփանոս Նախավկայի եկեղեցին էր, որի դռները բացելով՝ տեսնում են բազմաքանակ ոսկե ու արծաթե խաչեր, պատվիրանագրքեր, Սյունիքի բոլոր եկեղեցիների ուրիշ սպասքներ՝ յուրաքանչյուրն՝ իր գյուղաքաղաքի գրությամբ:

«Շաղատի եկեղեցու հրաշագործ վերահայտնությունը և սրբությունների գյուտը տեղի ունեցավ հայոց հռոժի (սեպտեմբեր) ամսվա մեկին,- շարունակում է Ստեփանոս Օրբելյանը:- Ամեն տարի այդ օրը մաղթողական ժամերգությամբ ինչ որ խնդրում էին Աստծուց, լինում էր հրաշքների կատարումով»: Պարզվում է, որ այս դեպքից շատ տարիներ առաջ, պարսից Շապուհ արքայի հարձակումից և ավերումից վախենալով, եկեղեցին հողապատել է տվել Բաբիկի և Արշակ Երկրորդ թագավորի կնոջ՝ գեղեցկուհի Փառանձեն թագուհու հայրը՝ Սյունյաց Անդոկ գորավարը:

Այսպես ահա՝ փախչող եղջերուն, որ որս էր դառնալու ճակատագրով, Աստծո ցանկությանը վերածվում է յուրօրինակ որսորդի, և նրա հետապնդածը... Շաղատի հրաշագործ եկեղեցին էր, որի գտնվելու վայրն այդ օրերին դեռևս անհայտ էր բոլորին:

ՀԱՂԹՈՂԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԸ

Հնուն օլիմպիական խաղերն, ինչպես այժմ, տեղի են ունեցել չորս տարին մեկ անգամ, սկզբում՝ միայն Հունաստանում, Օլիմպոս լեռան մերձակայքում: Հետագայում ընդլայնվել է դրանց աշխարհագրությունը՝ ընդգրկելով տարբեր երկրներ և տարբեր ազգությունների մարզիկների: Հայերը ևս հնուց ի վեր մարզական այդ մեծ ստուգատեսների մասնակիցներն են եղել: Պատմությունը վկայակոչել է հայ առաջին ախոյանների անունները. նրանք են՝ Բաբիկ Սյունի իշխանը և Վարազդատ Արշակունի թագավորը: Մեծ պատիվ էր օլիմպիական խաղերի հաղթող լինելը: Նրան սպասում էին անխամրելի փառքը, դրամական հսկայական պարգևը, ազնվականների և ասպետների շարքում դասվելը, կենդանության օրոք նրա ոսկյա կամ բրոնզե կիսանդրին՝ իբրև հավերժության խորհրդանիշ, հայրենիքում տեղադրելը: Եվ եթե այս բոլորին ավելացնենք, որ հաղթող մարզիկները վիթխարի կալվածքներ էին ստանում, ձեռք բերում մեծագույն իշխանություն, ապա պարզևատրման պատկերն ավելի քան պարզ կդառնա: Ահա թե ինչ է գրում պատմահայր Մովսես Խորենացին Վարազդատ Արշակունու մասին. «Այս Վարազդատը երիտասարդ էր տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով և շատ հզոր նետածության մեջ: Պարսկաստանի Շապուհ թագավորից փախչելով՝ նա գնացել էր բյուզանդական կայսեր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել: Նախ՝ Պիսայում բռնցքամարտիկներին հաղթելով, հետո՝ հելլադացիների (հույների) Արեգ քաղաքում կես օրում մի քանի առյուծ կոտորեց և օլիմպիական հանդեսի ըմբշամարտիկների խաղերում փառք վաստակեց և հարգանք: Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների (գերմանական ծագումով մի փոքրաթիվ ճյուղ) ազգի դեմ, համարձակվում են ասել, թե հավասար էին հայոց սուրբ Տրդատ թագավորի գործերին, որովհետև թշնամիների հինգ ախոյան հարձակվեցին նրա վրա, և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց, և մի բերդի վրա դիմելով՝ բերդի պատվարի վրա տասնյոթ մարդ նետով զարնելով՝ իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը թափվում են սաստիկ մրրիկից»:

Օլիմպիական խաղերի այսպիսի հզոր հաղթողի և պատերազմներում հերոսի փառք վաստակած երիտասարդի պարգևը... ոչ ավել, ոչ պակաս... հայոց՝ այդ ժամանակ թափուր մնացած գահն էր, ինչին, հաշվի առնելով նաև Արշակունիների արքայական տոհմից սերված լինելը, նրան արժանացրեց Բյուզանդիայի Օգոստոս Մեծ կայսրը:

Օլիմպիական խաղերի հայ ախոյանին, իսկապես որ, օլիմպիական պարգև...

8-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ Սյունյաց Անդոկ իշխանը՝ Փառանձեն թագուհու հայրը, Շապուհից դաժան վրեժ է լուծում դստեր չարանենգ սպանության համար: Գիշերով, երբ Շապուհը պատերազմում էր քուշանների

երկրում, իր զինվորներով Անդոկը մտնում է պարսից արքունիք, ավարառում ոսկյա և արծաթյա անհամար գանձեր, թանկագին գոհարներ և մեծ հարստությամբ հեռանում Բյուզանդիա: Պատերազմը վերջանալուց հետո Շապուհը վերադառնում է և տեսնելով պատահած աղետը՝ հրամայում է, որ իր զորքը մտնի Սյունիք, ավերի երկիրը և գերի վերցնի բոլորին: Բայց հեռատես Անդոկ Սյունին նախապես մարդկանցից, ինչք ու ունեցվածքից դատարկել էր տվել հայոց այդ նահանգը, և Շապուհի զորքը ձեռնունայն վերադառնում է: Այդ օրից ի վեր, երկար տարիներ Պարսկաստանում արգելված էր «Սյունիք» և «սյունեցի» անուններն արտաբերելը: Նույնիսկ Տիգրան մայրաքաղաքում՝ արքունիքի դռան նախաշենին, տեղադրված էր պղնձյա վիթխարի մի սանդ (անոթ)՝ լցված հնոցի մոխրով: Անցորդները խփում էին սանդին և ասում՝ թող Սյունիքի իշխանությունն այս մոխրի հետ վայր թափվի՝ կյանքով ու մտադրություններով:

Այստեղ է, որ սկսվում է Անդոկի որդու՝ Բաբիկի կյանքի ողիսականը: Բյուզանդիայում, հարստության և փառքի մեջ գտնվելով, նա կարոտում է հայրենի հողին: «Ինչպես որ քաղցր են ծնողները, այնպես էլ քաղցր է ծննդավայրը», - գրում է Մովսես Կաղանկատվացին: Բաբիկը ծափված գալիս է Պարսկաստան, տեղավորվում պարսից արքունիքում: «Պարսից օլիմպիական մրցությունների մեջ շատ մեծ շնորհք և արիություն է ցույց տալիս, և նրան ոչ ոք չի ճանաչում: Այդ ժամանակ հոների երկրից Յոնագուր անունով մի հոն իր զորքով դուրս է գալիս, ավարառում է Պարսկաստանը և, մարդ ուղարկելով Շապուհի մոտ, ասում է՝ ինչի՞ համար է այս արյունահեղությունը, եկ ես ու դու մենամարտենք: Շապուհն, իհարկե, խուսափում է հսկայի հետ մենամարտելուց: Յին ժամանակների ասպետական օրենքներով պարտության չափ մեծ խայտառակություն էր մարտահրավերը չընդունելը: Այստեղ է, որ Բաբիկի անունը հայտնի է դառնում թագավորին, ասում են, թե այդ գործը նրա միջոցով կկատարվի: Շապուհն իր մոտ է կանչում Բաբիկին, մատանիով կնքված մի որոշում է հանձնում նրան և ասում՝ եթե այս վրեժը լուծես, իմ կողմից մեծ խոստումների կարժանանաս»:

Եվ գեղեցկադեմ ու հաղթահասակ հայ դյուցազնը հանձն է առնում կատարել այդ խնդիրը: Նա հմտորեն մենամարտում է հոն հսկայի հետ՝ մտքում փայփայելով հայրենի ժառանգության՝ ավերված ու անմարդաբնակ դարձած Սյունիքի վերադարձը: Նա, ճարպկորեն սրով հարվածելով, տեղնուտեղը սպանում է մարդախողխող գազանին: Շապուհը, ուրախությամբ լցված, կանչում է Բաբիկին, որպեսզի կատարի նրան տված խոստումը: Բաբիկը, խոսք խնդրելով, ասում է. «Թող պղնձյա սանդը քո դռնից վերցվի»: Թագավորը զարմանքով հրամայում է սանդը տեղից վերցնել: Դրանով վերանում է Սյունյաց աշխարհի վրա ընկած անեծքը: Ապա Բաբիկն արքային խնդրում է, որ իր բնիկ հայրենական երկիրն իրեն վերադարձնի: «Շապուհն այդ ևս շնորհում է նրան և իրավունք

է տալիս Բագրատունիների և Մամիկոնյանների հետ համահավասար պատիվ ու աստիճան ունենալ Հայաստանում:

Այսպես՝ օլիմպիական մրցումների հայ առաջին հաղթող և Պարսկաստան ներխուժած հոն հսկային մենամարտում տապալող Բաբիկ Սյունի իշխանին, ասպետական սովորության համաձայն, իբրև պարգև, տրվում է տարիներ շարունակ կորցրած հայրենիքը և մեծագույն փառքն ու պատիվը:

ՍԱԿԱՆԱԽԱՂ

Մականախաղը Հին Հունաստանի ամենասիրված և տարածված մարզաձևն էր: Խաղում էին մեծ և փոքր, ծիավոր և հետիոտն: Բաժանվում էին երկու խմբի և միմյանց հետ մրցում՝ ցուցաբերելով հնարամտության, ճարպկության, նժույգին տիրապետելու, ուժի ու դիմացկունության, համբերության ու տոկունության հրաշքներ: Հաղթող թիմին սպասվում էին մեծագույն նվերներ ու դրամական պարգևներ, պատահում էր՝ մի ամբողջ գյուղ էին նվիրում լավագույն մականորդին, որովհետև մրցություններին հետևում էին բոլորը՝ արքայից ու իշխանից մինչև հասարակ շինականը, ոգևորվում սիրելի թիմի հաղթանակով և, ընդհակառակը, տխրում, երբ իրենց նահանգի խաղացողները պարտվում էին: Լավ մարզավիճակում գտնվելու համար հարկավոր էին ամենօրյա վարժանք, տարբեր հնարքների, խաբուսիկ շարժումների կիրառում, չընկճվելու կամք ու կարողություն: Բավական էր, որ ոտքի տակ հարթ, տափակ դաշտավայր լիներ՝ մեկ-երկու ասպարեզ երկարությամբ, արագավազ նժույգներ լինեին և... խաղալու գնդակ, որ մեր նախնիները պատրաստում էին կաշվից՝ մեջը թեթև փետուր լցնելով: Դրա համար էլ գնդակը մեր մատենագիրները հաճախ անվանել են փետրագնդակ:

Իսկ մական ունեին ամենքը, և մականախաղով զբաղվում էին ամենափոքր տարիքից: Դա նրանց վարժության և ապրելու կարևոր, ամենակարևոր եղանակներից մեկն էր: Մշտական պատերազմներից դադարի կամ զինավարժությունների ժամանակ այդ մարզաձևն են ընտրել նաև հայոց զորքերը: Դա նաև զինավարժանք էր, որ զինվորին հաղորդում էր համբերություն, ուժ, հաղթանակի հասնելու ձգտում, արիություն: Խաղաղ օրերի հմուտ մականորդը հմուտ զինվոր էր պատերազմի պահերին:

Մականախաղի մասին բազմաթիվ վկայություններ կան հայ պատմագիրների գրքերում: Ահա դրանցից մեկը, որը վերաբերում է 5-րդ դարում ապրած հայոց մեծ զորավար Վահան Մամիկոնյանի կյանքի ու գործունեության մի դրվագին: Պարսիկները հարձակվել են Հայաստանի վրա: Նրանք եկել-հասել են Տարոն, որը Վահան Մամիկոնյանի հայրենական կալվածքն է: Պարսից թագավորը Հայաստանում մարզպան է նշանակել իր քրոջ որդուն՝ Սիհրան զորավարին: Նա էլ փորձում է մեր երկիրը դարձնել Պարսկաստանի նահանգը: Նրա դեմ են ելնում հայոց հայրենասեր ուժերը՝ Ջահան Մամիկոնյանի առաջնորդությամբ: Հայերի մղած բազմաթիվ ճակատամարտերից մեկում Վահանը հերթական հաղթանակն է տանում: Այդ հաղթանակը կարևոր էր նաև նրանով, որ կարողանում է գերեվարել Սիհրան մարզպանին և կտրել տալ նրա գլուխը: Ահա թե ինչ է գրում այդ մասին Հովհան Մամիկոնյան պատմիչը: Ճակատամարտից հետո «միայն քառասուն մարդու Վահանը հրամայեց կենդանի թողնել, որպես զրուցատար գուժկան

պարսից արքային: Հանձնարարեց տանել թագավորին նաև Միհրանի գլուխը՝ այսպես պատվիրելով.

- Այս մարդը երբ մարգապան եկավ մեր երկիրը, այնժամ զորքերը դեմառդեմ ախոյան կանգնելով՝ խաղազնդակ էին ուզում, բայց չկարողացանք գտնել: Հույներից էլ չհամարձակվեցինք գնալ խնդրել, որովհետև ձեր ոխերին թշնամիներն են: Ձեր զորքն էլ աչքի անցկացրինք: Հեռվից տեսանք, որ ձերոնց մոտ նույնպես գնդակ չկար: Ստիպված կտրեցինք այս գլուխն ու խաղացինք: Ապա ինացանք, որ դուք Շահաստանից եկել եք Բուստր քաղաքը, որը վայր է տափարակ ու դաշտաձև: Գիտենք, որ գնդակ պիտի խաղաք. ահավասիկ՝ վերցրեք ձեր քրոջ որդու գլուխը, և թող ձեզ խաղազնդակ լինի սերնդից սերունդ»:

Ահա թե երբեմն ինչ կարող էր դառնալ մականախաղը հեռու-հեռավոր միջնադարում:

ԴԱՅՈՒԿԱՍԱՅՔ

Ձմեռ է, ցուրտ է: Երկնքից, ահա ուր որ է, կթափվեն առաջին փաթիլները՝ այնքան մաքուր, այնքան ճերմակաթև, որ, ինչպես գրել է հայ մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանը, «Կարծես սպիտակ թիթեռներ լինեն»: Եվ ուրեմն՝ սկսվելու է Սպիտակ թիթեռների թագավորությունը: Փաթիլները նախ անկրկնելի շուրջպար են բռնելու օդում, գրավելու են երկինքը, հետո ընկնելու են ցած, գրավելու են երկիրը, և մեր աշխարհը պատվելու է ծյունի համատարած ծրարով: Վերադառնալու է դահուկներն ու չմուշկներն օգտագործելու ժամանակը: Բայց չմոռանանք, հիշենք, որ այդ ձմեռը Հայաստան երկրում ո՛չ առաջինն է, ո՛չ էլ՝ վերջինը: Նա հայոց հազարամյա պատմության մշտական ուղեկիցն է: Իսկ մեր երկիրը՝ լեռնոտ ու քարքարոտ, տեղ-տեղ այնքան ծյունառատ էր, որ հնարավոր չէր մի վայրից մեկ ուրիշը գնալ: Ամենից համարձակն անգամ կկորչեր Սպիտակ թիթեռների թագավորությունում, որը հաճախ ծածկում էր մարդկանց, կսառչեր իրեն բաժին ընկած ծյունամորրիկում, և այդ ամենը կկատարվեր այնքան արագ, որ նա չէր հասցնի նույնիսկ օգնություն կանչել: Եվ հետո՝ ո՞վ էր օգնելու, ո՞վ էր գլխից ձեռ քաշել՝ սարսափելի ծյունամորրիկին դուրս գալու տնից: Մեր նախնիները, հատկապես հին սասունցիները, որոնց բնակավայրը լի էր խոր ձորերով, բարձրաբերձ լեռներով ու քարափներով, ձմռան երկարուձիգ ամիսներին դատապարտված էին տանը մնալուն: Բնականից քաջ ու համարձակ, սասունցիները չէին կարող տանել բնության այդ դաժան պարտադրանքը: Նրանք Թիթեռների թագավորության դեմ կռվելու բազմաթիվ եղանակներ են հորինել, և ծյունապատ կիրճերի ու սարերի վրայով ճախրել է... չէ՛... Սասնա Էպոսի հրեղեն մժույզ Քուռկիկ Ջալալին չէ, նրանից էլ շատ բարձր ճախրել է մեր նախնիների երևակայությունը, որի առջև արդեն չնչին արգելք են թվացել և՛ մարդաբոյ ձյան ծածկույթը, և՛ ծյունամորրիկը, և՛ սառնամանիքը...

Նրանք հորինել են փայտյա դահուկներ, որոնք արագորեն սահում էին ձյան վրայով և դահուկորդին ոչ միայն արագ տեղաշարժվելու, այլև ցրտից տաքանալու հնարավորություն էին տալիս: Եվ ուրեմն՝ դահուկները, որոնց առաջին նախատեսակները, կարելի է վստահորեն ասել, ունեն հայկական գրանցում: Դրանք, իհարկե, այնքան կատարելագործված չէին, այնքան ամուր ու դիմացկուն չէին, ինչպիսիք սովոր են տեսնել այժմ, բայց իրենց նախնական կոշտուկոպիտության ու պարզունակության մեջ չափազանց օգտակար էին սասունցիների համար հատկապես պատերազմի ժամանակ, երբ անհրաժեշտ էր արագորեն անցնել թշնամու թիկնունքը, շրջանցել, խուսանավել կամ անակնկալ հարձակվել:

Հայոց առաջին դահուկները և առաջին հայ դահուկորդները... Նրանք հաստատ սասունցիներ են եղել: Ահա թե ինչ է գրում այդ մասին 9-10-րդ դարերի պատմիչ Թովմա

Արժրուևին. «երբ թշնամիները հարձակվում են իրենց երկրի վրա, լեռնականները միաբերան գալիս են իրենց իշխաններին օգնության, քանզի տիրասեր են: Երկնքից վար թափվող անկայուն ձյան վրա ման գալու համար հնարել են փայտի կտորներ, որոնք օղակի պես չվանով ամրացնում են ոտքերի շուրջը և դյուրությամբ ընթանում ձյան, իբրև գետնի վրայով»:

Այդ գյուտին հաջորդել են նաև դահուկասահքի առաջին մրցումները, և մրցումների առաջին հաղթողների անունները փառավորվել են սերնդեսերունդ: «Գազանաբարո և արյունարբու, առ ոչինչ են համարում հարազատ եղբայրների, նույնպես և իրենց սպանությունը,- շարունակում է Թովմա Արժրուևի պատմիչը:- Սրանք կոչվում են արագագնացներ, բնակվում են այն լեռան վրա, որն Աղձնիքը բաժանում է Տարոնից: Խրթին և անհասկանալի խոսակցության, բարքերի պատճառով անվանվում են Խութ: Իրենց անուններով լեռն էլ է Խութ անվանվում: Անգիր գիտեն հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որ մշտապես ունեն շուրթերին... Հյուրասեր են և պատիվ տվող»: Այս հյուրասեր, խստաբարո կենցաղով ապրող մարդիկ էլ դաժան ձմռանը տեղից տեղ գնալու, նաև հազարումի արշավանքների մասնակցելու համար հորինել են ձյան վրա սահող՝ իրենց յուրօրինակ մաշիկները, և Սպիտակ թիթեռների թագավորությունն այլևս սարսափելի չի թվացել նրանց: